

Ամուլսարի ոսկու հանքի ԲՄԳԱ # 37084

Ազատում պատասխանատվությունից (մեր կադապարի ստանդարտ լեզու)

Սույն բնապահպանական ու սոցիալական գնահատման ամփոփումը (ԲՄԳԱ) ՄՖԿ կողմից պատրաստվել է հնարավոր ներդրումների բնապահպանական ու սոցիալական նկատառումների վերաբերյալ իր եզրակացությունների և առաջարկությունների լուսաբանման նպատակով: Դրա նպատակը ՄՖԿ գործունեության թափանցիկության մակարդակի բարձրացումն է: Ծրագրի հովանավորի կողմից պատրաստված և ներառված կամ կից ներկայացված ցանկացած ծրագրային փաստաթուղթ կամ տվյալ հրապարակվել է Ծրագրի հովանավորի թույլատվությամբ: ՄՖԿ-ը համարում է, որ սույն ԲՄԳԱ որակը պատշաճ է հրապարակման համար, սակայն նրա կողմից դրանում գետնեղված ամբողջ տեղեկատվության ինքնուրույն ստուգում չի կատարվել: Այն պետք է ներկայացվի նախքան ՄՖԿ տնօրենների խորհրդի քննարկումը, որից հետո կարող է պարբերաբար թարմացվել: Խորհրդի նիստի ամսաթիվը մոտավոր է հաշվարկված, իսկ սույն փաստաթուղթը չպետք է մեկնաբանվի որպես տնօրենների խորհրդի որոշման արդյունք:

Ծրագրի նկարագրություն

Ամուլսարի ոսկու հանքը (այսուհետ՝ «Ծրագիր») Հայաստանի հարավային հատվածում բաց եղանակով արդյունահանվող նոր ոսկու հանքի Ծրագիր է, որն իրականացվում է Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդին (այսուհետ՝ «Ընկերություն» կամ «Լիդիան») ամբողջությամբ պատկանող հայաստանյան դուստր ընկերության՝ «Գեոթիմի» (այսուհետ՝ «Գեոթիմ») ՓԲԸ կողմից: Ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը կազմում է 395 մլն ԱՄՆ դոլար, որը հիմնականում ֆինանսավորվելու է Orion Mine Finance («Orion») և Resource Capital Fund VI L.P («RCF») ի կողմից տրամադրված 325 մլն ԱՄՆ դոլար կազմող շինարարության ֆինանսավորման փաթեթի միջոցով: Այս փաթեթը ներառում է 160 մլն ԱՄՆ դոլար ոչ ստորադաս պարտք, 60 մլն դոլար ոսկու և արծաթի սթրիմինգ և 80 մլն ԱՄՆ դոլար ընկերության սեփական կապիտալում ներդրումներ, ինչպես նաև գերծախսերի ֆինանսավորումն ապահովվող 25 մլն ԱՄՆ դոլար պահուստային ակրեդիտիվ: Հաշվեկշիռի մնացած մասը ֆինանսավորվելու է սարքավորումների լիզինգի և բաց վաճառքի համար բաժնետոմսերի թողարկման միջոցով, որը Լիդիանի կողմից ավարտին է հասցվել 2016թ. մայիսին:

ՄՖԿ կողմից առաջարկվող 40 մլն ԱՄՆ դոլար ներդրումը Orion և RCF-ի կողմից տրամադրված 325 մլն ԱՄՆ դոլար կազմող շինարարության ֆինանսավորման փաթեթի մասն է կազմում:

Ամուլսարի ոսկու հանքի Ծրագիրը տեղակայված է կենտրոնական Հայաստանի հարավ-արևելքում՝ Երևանից մոտ 170կմ հեռավորության վրա: Ծրագրին ամենամոտ քաղաքը Ջերմուկ առողջարանային քաղաքն է՝ մոտակա լեռնադահուկային հանգստավայրով, որը գտնվում է ոսկու-արծաթի հանքավայրից 10կմ դեպի հյուսիս-արևմուտք, իսկ ծրագրային ամենամոտ ենթակառուցվածքից՝ 7կմ հեռավորության վրա:

Ծրագրի անմիջապես հարևանությամբ կան 4 գյուղական համայնքներ, մասնավորապես՝ Վայոց Ձորի մարզում՝ Կեչուտ (Ջերմուկ քաղաքի հետ կապված գյուղական համայնք), Սարավան (որը ներառում է Սարալանջ և Ուղեձոր համայնքները) և Գնդեվազ համայնքները, և Սյունիքի մարզում՝ Գորայք համայնքը: Հանքի ապագա ենթակառուցվածքի՝ Կույտային տարրավազման հրապարակի (ԿՏՀ) տարածման գոտուն ամենամոտն է գտնվում Գնդեվազ համայնքը: Այն գտնվում է գյուղի արտաքին սահմանից > 1 կմ հեռավորության վրա: Ծրագրի ազդակիր տարածքի հողերը բնութագրվում են ենթալայան և լեռնամարգագետնային լանդշաֆտներով, որտեղ գտնվում են ամռանը արածեցման համար օգտագործվող արոտավայրեր: Առավել ցածր բարձրություններում հողերի գյուղատնտեսական նպատակներով օգտագործումն ավելի բազմազան է և ընդգրկում է տարատեսակ մշակաբույսեր: Առավել ընդարձակ տարածք բնութագրվում է լեռներով, բլրապատ ռելիեֆով, գետահովիտներով և ավելի մեղմ թեքությամբ սարահարթերով: Ծրագրի տարածքի լանջերից հոսող մակերևութային ջրերը նպաստում են Արփա, Դարբ և Որորտան գետերի ջրհավաք ավազանի ձևավորմանը: Որոտան գետը հոսում է ծրագրից դեպի արևելք, իսկ Դարբ գետը՝ դեպի հարավ՝ միանալով դեպի արևմուտք հոսող Արփա գետին:

Ներկայումս Էրատոյում, Տիգրանեսում և Արտավազդեսում հաստատված և հավանական պաշարները կազմում են 96.7Մտ՝ 0.78 գ/տ ոսկու և 3.6 գ/տ արծաթի պարունակություններով: Առաջարկվող հանքում շահագործման նախնական 10 տարիների ընթացքում նախատեսվում է արտադրվել 2.1 մլն ունցիա ոսկի և 0.7մլն ունցիա արծաթ: Ծրագրի կառուցման համար կպահանջվի 18 ամիս: Նախնական աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2016թ. սեպտեմբերին:

Շինարարության ընթացքում առավելագույն ներգրավված աշխատուժը նախնական հաշվարկներով կազմելու է մոտ 1300 մարդ, իսկ շահագործման փուլում՝ 657 աշխատակից: Աշխատուժի մեծամասնությունը՝ մոտ 85%-ը, աշխատելու են հանքարդյունահանման ու մշակման հանգույցներում: Փակման ընթացքում մոնիտորինգի ու տեխսպասարկման նպատակով աշխատանքի ընդունված աշխատակիցների քանակը կազմելու է մոտ 20 մարդ: Աշխատուժի մեծամասնությունը (մոտ 95%) լիենլու է Հայաստանից, իսկ նրանցից մոտ 30%-ը՝ տեղաբնակներ:

Ծրագրի գլխավոր բաղադրիչներն են լինելու՝

- Տիգրանես/Արտավազդես և Էրատո բացահանքերը,
- ԴԱԼ և Տիգրանես/Արտավազդես և Էրատո բացահանքերի լցափակումը (դատարկ ապարների լցակույտ),
- Ջարդիչ կայանը (բաղկացած՝ առաջնային և երկրորդային ջարդիչ կայաններից),
- Չմշակված հանքաքարի լցակույտը (ՉՀԼ), մանրացված ապարների և ոսկու ցածր պարունակությամբ հանքաքարի կույտերը,
- Հողի բերրի շերտի կույտերը,
- Բացատար և մերձատար ճանապարհները,
- Վերգետնյա հոսքագիծը, մանրացված ապարների լցակույտը և ինքնաթափերի բեռնաթափման տարածքները,
- Կույտային տարրավազման հրապարակը (ԿՏՀ), ներառյալ.

- Կույտային տարրավազման հարթակը(ԿՏՀ),
- Լուծույթների կուտակման ավազանները, 3 հեղեղաջրերի ավազանները,
- Աղսորբցիայի-դետորբցիայի-վերականգնման (ԱԴՎ) կայանը,
- Վտանգավոր թափոնների ժամանակավոր լցակայանը
- Գրասենյակները, լաբորատորիան, տեխսպասարկման արհեստանոցը և ռեագենտների պահեստները,
- Նստավածքների կարգավորման ավազանները
- Հանքի մեքենա-մեխանիզմների վերանորոգման կետերը (տեխսպասարկման արհեստանոցները) և հանքի վարչական գրասենյակները
- Կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանները
- Ոչ վտանգավոր թափոնների հերմետիկ աղբավայրը
- Պայթուցիկ նյութերի պահեստը (երկու տեղամասերում), և
- Շինարարության փուլի ընթացքում 600 բանվոր տեղավորելու համար անհրաժեշտ բանվորական ճամբարը: Հանքի շահագործման փուլում, տեղում չբնակվող աշխատուժը կտեղակայվի Ջերմուկում (հյուրանոցներում և/կամ բնակարաններում):

Ծրագրի հիմնական փուլերի ընթացքում նախատեսված գործողությունները ներառում են՝

Վաղ փուլի աշխատանքներ: Այս փուլը նախատեսվում է մեկնարկել 2016 թ երրորդ եռամսյակի ընթացքում և կներառի նստեցման ու դրենաժի վերահսկողության կրիտիկական կարևորության միջոցների շինարարությունը, Ծրագրի աշխատանքային տարածք մոտեցնող ճանապարհների արդիականացումը կամ զարգացումը, շինարարական փուլի գրասենյակների, ժամանակավոր պահեստների, սարքավորումների կայանման և սպասարկու հանգույցների համար հարթակի ստեղծումը, ջրի, հոսանքի ու կենցաղային կեղտաջրերի համար ժամանակավոր ինժեներային կոմունիկացիաների հիմնումը, Ծրագրի աշխատանքային տարածքներում մուտքի վերահսկման նպատակով պահակակետերի տեղադրումը, վաղ փուլի շինարարական աշխատանքների իրականացման նպատակով Արփա գետից ժամանակավոր ջրառը, ԿՏՀ տեղամասի ստորին հատվածի երկայնքով ձգվող ոռոգման խողովակաշարի տեղափոխումը (կապում, առունների պատրաստում և նոր խողովակի տեղադրում) և հոսանքագծերի հեռացումը, նախնական հնագիտական պեղումների իրականացումը, ներառյալ՝ ԿՏՀ տարածքում:

Շինարարության հիմնական փուլ: Այս փուլի տևողությունը կազմելու է մոտ երկու տարի և ներառելու է հանքի շահագործման, հանքաքարի ու թանկարժեք մետաղների մշակման, ներառյալ՝ շինարարության փուլի բանվորական ժամանակավոր ճամբարի, ջրամատակարարման ու ջրահեռացման հանգույցների, մոտեցնող ճանապարհների, էլեկտրաէներգիայի նոր ենթակայանի և տեղամասի ջրի կառավարման ենթակառուցվածքի համար անհրաժեշտ օժանդակ ենթակառուցվածքի կառուցումը:

Շահագործման փուլ: Նախագծով պլանավորվում է հանքի շահագործման աշխատանքներն իրականացնել տարեկան 350 օր, հաշվի է առնվել այն հանգամանքը,

որ ձևեղվա ամիսներին մոտ 15 օր աշխատանքները կարող են դադարեցվել խստաշունչ եղանակային պայմանների պատճառով: Տիգրանեսի, Արտավազդեսի և Էրատոյի հանքային մարմինների արդյունահանումն իրականացվելու է ավանդական բաց եղանակով՝ կիրառելով փուլային մոտեցում և մեկնարկելով Արտավազդեսից, շարունակելով դեպի Տիգրանես և առանձին բացահանքով արդյունահանելով Էրատո հանքային մարմինը: Արդյունահանված հանքաքարը մանրացվելու և տեղափոխվելու է ԿՏՀ փոխակրիչի և բեռնատարների կիրառմամբ, որտեղ ոսկու և արծաթի տարրավազման նպատակով օգտագործվելու է նատրիումի ցիանային նոսր լուծույթ (NaCN): Ցիանային լուծույթում լուծված ոսկին և արծաթը վերականգնվելու են աղսորբցիայի, դետրբցիայի և վերականգնման (ԱԴՎ) հանգույցի միջոցով: Տարանջատված թանկարժեք մետաղները վերածվելու են դորե ոսկու ձուլակտորների և գտման նպատակով տեղափոխվելու Ծրագրի տարածքից դուրս:

Օժանդակ ենթակառուցվածք և հանգույցներ: Դրանք ներառելու են՝ բեռնատարների վերանորոգման արհեստանոցը, հանքի բեռնատարների տեխսպասարկման արհեստանոցը, բեռնատարների լվացման կետը՝ նավթամթերքից ջուրը մաքրելու համակարգով, կայանի պահեստը և արհեստանոցը, վարչական շենքը, մեքենաների լցակայանը՝ դիզելի և բենզինի պահեստավորման վերգետնյա ցիստեռներով, արտադրամասի մետալուրգիական լաբորատորիան՝ ցիանիդի, ջրածնային ցուցիչի և ոսկու փորձանմուշների մետալուրգիական փորձաքննություն իրականացնելու համար, բժշկական անձնակազմով ռաջին օգնության կետը, անվտանգության ծառայության անցակետերը, ռեագենտների և քիմիական նյութերի պահեստը և վտանգավոր թափոնների ժամանակավոր լցակայանը: Այլ օժանդակ կառույցները ներառելու են՝ աշխատակիցների կացարանները /հյուրանոցներ/բնակարաններ/ Ջերմուկում, Գորայքում տեղակայված գլխավոր պահեստը, անվտանգության անցակետերը, պայթուցիկ նյութերի պահեստը, ոչ վտանգավոր թափոնների աղբավայրը, թափոնների տեսակավորման համակարգը, աղբակեզ վառարանն ու հիմնական էլեկտրական ենթակայանը:

Շահագործումից դուրս բերման, վերականգնման ու փակման փուլեր: Այս փուլի նախատեսված տևողությունը կազմելու է 2 տարի, որին հետևելու է 5 տարի տևողությամբ հետփակման մոնիտորինգի շրջանը: Հանքի վերականգնման ու փակման նախնական պլանով նախատեսվում է բոլոր ոչ պիտանի մակերևութային կառույցների ապամոնտաժում: Հանքի շահագործման ավարտին ԿՏՀ թունազերծումն իրականացվելու է ցիանաքայքայիչ լուծույթով տարածքի լվացման միջոցով՝ մինչև ցիանիդի ստանդարտներին արտահոսքի համապատասխանության ձեռքբերումը: Հետփակման շրջանում բոլոր արտահոսքերն մաքրվելու են նիտրատի և սուլֆատի նվազեցման կենսատեակտորների միջոցով: Ջրի որակի ստանդարտներին համապատասխան ջրի մաքրումը կարող է ապահովվել միայն Պասիվ ջրամաքրման համակարգի (ՊՁՄ) միջոցով: Պասիվ ջրամաքրման համակարգից դուրս եկող արտահոսքը բաց է թողնվելու Արփա գետ կամ կիրառվելու է հողի ռոռզման նպատակներով:

ԿՏՀ և ԴԱԼ հանգույցները վերապրոֆիլավորվելու են, իսկ դրանցից դուրս եկող ջրերը մաքրվելու են ՊՁՄ միջոցով: Փակումից հետո ևս կատարվելու է դրանց մոնիտորին և

համապատասխան մաքրում՝ մինչև ջրի որակի ստանդարտներին համապատասխանությունը: Բացահանքերի հետլիցքը կօժանդակի տարածքի վերականգնմանն ու փակումից հետո բացահանքերի տեսողական ազդեցության նվազեցմանը, ԴԱԼ ընդհանուր ծավալի, տարածման գոտու և ազդեցության նվազեցմանը և բացահանքերում լճակների առաջացման ռիսկի նվազեցմանը: Բացահանքի եզրերի անվտանգությունն ապահովվելու է բերմաների կիրառման միջոցով, ապա մուտքի կանխման նպատակով կատարվելու է արտաքին հատվածի ցանկապատում:

ՄՖԿ գնահատման շրջանակի դիտարկում

ՄՖԿ կողմից Ծրագրի բնապահպանական ու սոցիալական գնահատման շրջանակներում կատարվել է բնապահպանական, սոցիալական, առողջության ու անվտանգության (ԲՄԱԱ) փաստաթղթերի, ներառյալ՝ Ծրագրի տեխնիկական ու ԲՄԱԱ հաշվետվությունների ու արաձանագրությունների վերլուծություն, Բնապահպանական ու սոցիալական ազդեցությունների գնահատման (ԲՄԱԳ) և Ծրագրի տարատեսակ ֆիզիկական, կենսաբանական ու սոցիալական ասպեկտներին վերաբերող ուսումնասիրությունների դիտարկում, հողի ձեռքբերման գործընթացի ու շահագրգիռ կողմերի ներգրավման փաստաթղթավորում, Ծրագրի ինժեներատեխնիկական նախագծային առաձևահատկությունների ու կապալառուների կառավարման փաստաթղթերի, ինչպես նաև շինարարության, շահագործման ու շահագործումից դուրս բերմանն առնչվող ԲՄԱԱ կառավարման պլանների ու շահագործական ընթացակարգերի գնահատում: Ի լրումն, ՄՖԿ գնահատումը հիմնված է 2007 և 2015թթ ընթացքում Ծրագրի տեղամաս կատարված մի քանի այցերի, Լիդիանի և Գեոթիմի հիմնական ղեկավար ու տեխնիկական անձնակազմերի հետ հարցազրույցների, Ծրագրի շրջակա համայնքների անդամների և կառավարության ներկայացուցիչների ու այլ շահագրգիռ կողմերի հետ մայրաքաղաք Երևանում հանդիպումների վրա:

ՄՖԿ բնապահպանական ու սոցիալական գծով մասնագետները Լիդիանի հետ սերտորեն աշխատել են 2007թ. օգոստոսին բաժնետիրական կապիտալում առաջին ներդրման ընթացքում ուղղորդելով և խորհրդատվություն տրամադրելով հետախուզման տարբեր փուլերի ընթացքին զուգընթաց ծագող ԲՄԱԱ խնդիրներ վերաբերյալ: Այս գործողությունների շրջանակներում ՄՖԿ անձնակազմը մասնակցել է Ծրագրի տեղամաս ԲՄԱԱ ամենամյա վերահսկողական այցերին և օժանդակել է ընկերությանը ՄՖԿ կատարողական ստանդարտներին (ԿՍ) ու արդյունաբերության վարման լավ միջազգային ստանդարտներին (ԱԼՄՍ) համապատասխան հետախուզական աշխատանքների իրականացման նպատակով իր ԲՄԱԱ և կադրային քաղաքականությունների և առնչվող կառավարման պլանների ու ծրագրերի սահմանման հարցում: Ի հավելումն, Ծրագրի զարգացման նպատակով ՄՖԿ-ն իր օժանդակությունն է ցուցաբերել ընկերությանը անհրաժեշտ ԲՄԱԱ փաստաթղթերի, համակարգերի ու գործընթացների մշակման ընթացքում: Այս աշխատանքների շարժանակում, ՄՖԿ սերտորեն աշխատել է ԲՄԱԳ մշակմամբ զբաղվող միջազգային խորհրդատվական ֆիրմաների հետ, որն ամբողջությամբ համապատասխանում է

2014թ. հանքային իրավունքի համար և 2016թ. ՀՀ բնապահպանության նախարարությանը ներակայացված ՇՄԱ գնահատմանը, ինչպես նաև 2016թ. մայիսին շինարարության, շահագործման ու փակման փուլերը ներառող հանքի զարգացման նպատակով հրապարկված ԲՄԱ գնահատմանը: Վերջերս, նախքան շինարարության մեկնարկը մի շարք առանցքային պահանջվող արդյունքների ամփոփման նպատակով ՄՖԿ-ը համագործակցել է ընկերության հետ, որը նշված է կից ներկայացված Բնապահպանական ու սոցիալական գործողությունների ծրագրում (ԲՄԳԾ):

Սահմանված կիրառելի կատարողական ստանդարտներ

Թեպետ սույն ներդրման շրջանակներում հնարավոր է կիրառել բոլոր կատարողական ստանդարտները, սակայն էլնելով ՄՖԿ բնապահպանական ու սոցիալական պատշաճ հոգածության տեսանկյունից, ենթադրվում է, որ Ծրագրի արդյունքում այնպիսի ազդեցություններ են առաջանալու, որոնք պետք է կառավարվեն հետևյալ կատարողական ստանդարտների համապատասխան՝

ԿՄ1: Բնապահպանական ու սոցիալական ռիսկերի ու ազդեցությունների գնահատում և կառավարում,

ԿՄ2: Աշխատանք և աշխատանքային պայմաններ,

ԿՄ3: Ռեսուրսի արդյունավետությունը և աղտոտվածության կանխումը,

ԿՄ4: Համայնքի առողջությունը, անվտանգությունը և ապահովությունը ,

ԿՄ5: Հողերի ձեռքբերում և վերաբնակեցում

ԿՄ6: Կենսաբազմազանության պահպանում և բնական ռեսուրսների կայուն կառավարում, և

ԿՄ8: Մշակութային ժառանգություն:

Ինչ վերաբերում է ԿՄ7-ին (Տեղաբնակ մարդիկ), ապա այս ԿՄ-ը կիրառելի չէ սույն Ծրագրի նկատմամբ, քանի որ Ծրագրի ազդակիր տարածքում բնակվող կամ այդ տարածքն օգտագործող տեղաբնակներ չկան: ՄՖԿ ներդրումների շարունակականության դեպքում կատարողական ստանդարտների հետ համապատասխանությունը պետք է պարբերաբար վերադիտարկվի ՄՖԿ կողմից:

Բնապահպանական ու սոցիալական դասակարգում և հիմնավորում

Սա Ա կատեգորիայի մեծ, համալիր Ծրագիր է, որը ԿՏՀ կառուցման նպատակով հողի ձեռքբերման ու բացահանքերի զարգացման հետևանքով լանդշաֆտային տրանսֆորմացիայի արդյունքում համապատասխանաբար էական սոցիալական ու բնապահպանական ռիսկերի և անդառնալի ազդեցությունների է հանգեցնելու: Ծրագրի տարբեր փուլերի ընթացքում լուծում պահանջող առանցքային խնդիրները ներառում են. մակերևութային և ստորգետնյա ջրերի կառավարում, աղտոտման կանխում, կենսաբազմազանության կառավարում, ցիանիդի կառավարում, ոչ վտանգավոր և վտանգավոր թափոնների կառավարում, համայնքի առողջություն և անվտանգություն, ազդեցություններ ապրուստի միջոցների, անվտանգության, աշխատանքի վրա և ռազմավարական շահագրգիռ կողմերի ներգրավում: Այս ազդեցությունների կառավարումն իրականացվելու է համայնքի առողջության և անվտանգության կառավարման պլանի միջոցով:

Վերոհիշյալ խնդիրների լուծման ու ՄՖԿ կատարողական ստանդարտների պահանջների հետ համապատասխանության նպատակով Լիդիանի կողմից մշակվել են համապարփակ ԲՄԱԳ, պարտավորությունների գրանցամատյան, բնապահպանական ու սոցիալական կառավարման համակարգ (ԲՄԿՀ) և աշխատանքի հիգիենայի ու անվտանգության կառավարման համակարգ (ԱՀԱԿՀ): Այս համակարգերը ներառում են Ծրագրի տարբեր փուլերի ընթացքում առաջացող կամ առկա հնարավոր ռիսկերին ու ազդեցություններին առնչվող անհրաժեշտ կառավարման պլաններ և գործառնական ընթացակարգեր: Ստորև նկարագրված և Բնապահպանական ու սոցիալական գործողությունների ծրագրում (ԲՄԳԾ) ներկայացված միջոցառումների իրականացումից հետո Ծրագիրը կհամապատասխանի բնապահպանական ու սոցիալական պահանջներին, մասնավորապես՝ սոցիալական ու բնապահպանական կայունությանը ու տեղեկատվության մատչելիության քաղաքականությանն առնչվող ՄՖԿ Կատարողական ստանդարտներին, ինչպես նաև Համաշխարհային Բանկի/ՄՖԿ շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության (ՇՄԱԱ) կիրառելի ուղեցույցներին ու ԱԼՄԳ-ին: Բոլոր պահանջները հավասարապես կիրառելի են Լիդիանի, Գեոթիմի, նրա շինարարական աշխատանքների կառավարմամբ զբաղվող խորհրդատուի (Praetorian Construction Management), ինչպես նաև նրա կապալառուների և ենթակապալառուների նկատմամբ:

Բնապահպանական ու սոցիալական մեղմման միջոցառումներ

Այս և ՄՖԿ պահանջներից բացի ՄՖԿ գնահատման շրջանակներում դիտարկվել են նաև Ծրագրին ու բացերին առնչվող բնապահպանական ու սոցիալական կառավարման պլանավորման գործընթացներն ու փաստաթղթերը: Ըստ անհրաժեշտության, ողջամիտ ժամանակահատվածում այդ բացերի լրացման նպատակով բացերին հաջորդող կետերում (եթե կիրառելի է) և համաձայնեցված բնապահպանական ու սոցիալական գործողությունների ծրագրում (ԲՄԳԾ), ամփոփված են ուղղիչ միջոցառումներ: Այս միջոցառումների իրականացման միջոցով Ծրագիրը կնախագծվի և կշահագործվի կատարողական ստանդարտների նպատակներին համապատասխան:

ԿՄ1 Բնապահպանական ու Սոցիալական Ռիսկերի ու Ազդեցությունների Գնահատում և Կառավարում

Բնապահպանական ու սոցիալական կառավարման համակարգ (ԲՄԿՀՏ)

Ընկերությունը մշակել է շրջակա միջավայրի պահպանության, համայնքային հարաբերությունների, առողջության, անվտանգության և մարդկային ռեսուրսների, ինչպես նաև ահազանգման, կոռուպցիայի դեմ պայքարի, աշխատակիցների վերապատրաստման, տեղեկատվության տրամադրման ու գաղտնիության քաղաքականություններ ու վարքագծի կանոնագիրք, որոնցում հստակորեն սահմանված է ՀՀ օրենսդրական պահանջներին, ՄՖԿ Կատարողական ստանդարտներին ու ԲԱԱ ուղեցույցներին համապատասխանության նպատակը: Ընկերությունը պատրաստել է նաև պարտավորությունների համապարփակ գրանցամատյան (ՊԳ), որում մանրամասնված են ԲՄԱԳ գործընթացի շրջանակներում ստանձնված բոլոր պարտավորությունները: Մշակվել է նաև դինամիկ բնույթի և ISO14001 և OHSAS18001 ստանդարտների առանցքային բաղադրիչներն արտացոլող շարունակական բարելավման համար անհրաժեշտ «պլանավորել-կատարել-ստուգել-

գործել» շրջափուլի բաղադրիչները ներառող ԲևՍ ու ԱևԱ կառավարման համապարփակ համակարգերի շրջանակը:

Այս քաղաքականությունների հետ միասին, կառավարման համակարգերի մասը կազմող ծրագրերը ներառում են. իրավական պահանջների նույնացում, բնապահպանական, սոցիալական և առողջության ու անվտանգության ասպեկտների ու ազդեցությունների բացահայտման ծրագրեր, ռիսկերի գնահատում և ռիսկերի կառավարման պլանավորում, ԲևՍևԱևԱ ԿՀ նպատակների ու թիրախների սահմանման գործընթացներ, գործառնական վերահսկման միջոցառումներ, որոնք ներառում են ԲՄԱԱ կառավարման պլանները (1-ին և 2-րդ մակարդակների փաստաթղթեր), կազմակերպչական կարողությունների տարրեր, արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման, մոնիտորինգի ու չափման տարրեր և շահագրգիռ կողմերի ներգրավման ու արտաքին հաղորդակցության տարրեր: Ընկերությունը գտնվում է 3-րդ մակարդակի համապարփակ ԲևՍ և ԱևԱ ստանդարտ շահագործական ընթացակարգերի (ՄՇԸ) մշակման գործընթացում, որոնք կապալառուների և ենթակապալառուների կողմից պայամանագրին և ԲՄԱԳ-ը համապատասխանության ապահովման նպատակով ներառում են աշխատանքային ու մեթոդական ցուցումներ:

ՄՖԿ-ը սերտորեն աշխատում է ընկերության հետ նախքան շինարարության մեկնարկը (տես՝ ԲՄԱԳ # 1) ապահովելու համար ԲևՍ և ԱևԱ կառավարման համակարգի և դրա համապատասխան 1-ին և 2-րդ մակարդակի փաստաթղթերի ու կառավարման պլանների, ինչպես նաև 3-րդ մակարդակի մանրամասն ստանդարտ շահագործական ընթացակարգերի համապատասխանությունը ԱԼՄԳ-ին: Ընկերությունն աշխատելու է կապալառուների և ենթակապալառուների հետ՝ նախքան աշխատանքի մեկնարկը ապահովելով այս ընկերությունների կողմից Ծրագրի շրջանակներում ստանձնած բոլոր պարտավորությունների և պահանջների վերաբերյալ տեղեկացվածությունը և դրանց ներառումը իրենց առաջարկներում և ծախսերի նախահաշիվներում (տես՝ ԲՄԱԳ # 2):

Հետագայում, նախքան շահագործման փուլի մեկնարկը, ՄՖԿ նաև պետք է ապահովի ընկերության ԱԼՄԳ համապատասխան ադեկվատ ԲՄԱԱ ԿՀ առկայությունը (տես՝ ԲՄԱԳ # 17):

Ռիսկերի և ազդեցությունների բացահայտում

Ամուլսար Ծրագրի համար թարմացված ԲՄԱ գնահատումը մշակվել է ՈԻԱԻ (Wardell Armstrong International (WAI)) ընկերության կողմից, որը թողարկվել է 2016թ. մայիսին: Այն հիմնված է բազմաթիվ տեխնիկական հաշվետվությունների և պաշտոնական ուսումնասիրությունների վրա, որոնք մեկնարկվել են 2007թ-ից և շարունակվել են մինչև 2016թ.: Թարմացված ԲՄԱ գնահատումը հիմնված է նաև Ծրագրի նախագծի ու հատակագծի բազմաթիվ փոփոխությունների արդյունքում ստացված տեղեկատվության վրա, որը, շատ դեպքերում հիմք է հանդիսացել ԲևՍևԱևԱ ազդեցությունների նվազեցման նպատակով կատարելագործման համար: 2015թ. Samuel Engineering ընկերության կողմից իրականացվել է ծախսերի օպտիմալացման փորձ: Թարմացված ԲՄԱԳ-ը ներառում է նաև ՄՖԿ և այլ վարկատուների կողմից 2012, 2014 և 2015թ. ԲՄԱԳ նախորդ տարբերակների վերաբերյալ տրամադրված մեկնաբանությունները:

ԲՄԱԳ գործընթացի առանցքային բաղադրիչը այլընտրանքային մոտեցումն է, որը թույլ է տալիս ԲՄԱԱ ռիսկերի ու ազդեցությունների նույնացման ու գնահատման ներառումը ինժեներա-տեխնիկական ուսումնասիրություններում և ծրագրի այնպիսի նախագծումը, որը թույլ կտա խուսափել, մեղմել կամ կառավարել առավել էական ռիսկերն ու ազդեցությունները: Այս գործընթացի շրջանակներում, այս ռիսկերի բացահայտման և առավել էական ազդեցություններից խուսափելու և նվազեցնելու նպատակով ՈՒԱԻ ընկերությունը սերտորեն աշխատել է ընկերության և դրա ինժեներա-տեխնիկական խորհրդատուների հետ: Ծրագրի նախագծում բոլոր քանակական ու որակական ԲՄԱԱ միջոցառումների ներառվածությունն ապահովելու համար ընկերությունը պատրաստել է նաև ինժեներա-տեխնիկական նախագծման չափանիշներին (ԻՏՆԶ) առնչվող փաստաթուղթ: Այս այլընտրանքային մոտեցման շնորհիվ Ծրագրի տարածման գոտին կրճատվել է 687 հա փոխարեն կազմելով 609հա, հատկացվող տարածքը 1203հա փոխարեն կազմելով 1159հա, բնական կենսամիջավայրի վրա ազդեցությունը 608հա փոխարեն՝ 519.5հա, իսկ ջերմոցային գազերի արտանետումները նվազեցվել են 0,344տ CO₂e փոխարեն կազմելով 92,200տCO₂e: Տարեկան կտրվածքով էներգիայի պահանջը նվազել է 94,667 ՄՎտժ փոխարեն կազմելով 49,636 ՄՎտժ: Եվ հակառակը, վերանայված Ծրագրի պայմաններում տեսողական ազդեցությունները կլինի ավելի մեծ, այդ թվում՝ գիշերային ժամերին օգտագործվող լույսերի և փոխադրամիջոցների տեղաշարժման հետևանքով, իսկ Ծրագիրն այլևս փակ (գրոյական արտահոսքեր) շրջափուլով չի շահագործվի: 5-րդ տարվանից սկսած կոնտակտային ջրերի (այդ թվում՝ թթվային ապարի ցանկացած դրենաժի) մաքրման նպատակով Պասիվ ջրամաքրման համակարգ է մշակվելու (նախագծված ջրատարածքներ):

Հիմնվելով ԲՄԱԳ գործընթացի և ազդեցությունների գնահատման վրա դրանք ներառում են. (i) Շրջակա համայնքների լանդշաֆտային և տեսողական ազդեցություններ, և հողատեսքերի երկարաժամկետ փոփոխություններ, (ii) հանքի հետ առնչվող ենթակառուցվածքներից, մասնավորապես՝ ԿՏՀ-ից և ԴԱԼ-ից հնարավոր արտահոսքեր դեպի մակերևութային ու ստորգետնյա ջրեր, որն ըստ անհրաժեշտության պետք է մեղմացվի՝ ապահովելով արտահոսքի որակի համապատասխանությունը կամ գերազանցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ՄՖԿ ԲԱԱ ուղեցույցների ու Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգրքի (ՑԿՍՕ) պահանջներին, (iii) արածեցման, կերի հայթայթման և գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման հետևանքով հողերի կորուստ, (iv) Ծրագրի զարգացման արդյունքում ազդեցություն 81 պոտենցիալ հնագիտական վայրերի վրա, որոնք պետք է արձանագրվեն, ուսումնասիրվեն, հեռացվեն կամ տեղափոխվեն, (v) *Potentilla porphyrantha* (*Մատնունի ծիրանավոր*) և *Ursus arctos* (*Գորշ արջ*) տեսակների կրիտիկական կենսամիջավայրերի կորուստ և կենսաբազմազանության վրա այլ ազդեցություններ, ինչպիսին է ֆաունայի տեղաշարժը, և (vi) տեղամասում առաջացած վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնների կառավարումը:

Կառավարման ծրագրեր

ԲՄԱԳ մշակման շրջանակներում կատարվել է Ծրագրի տարբեր փուլերում բացահայտված ազդեցությունների կառավարմանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների մշակում: Ինչպես նաև, առկա կառավարման համակարգի

շրջանակներում ընկերության կողմից մշակվել է բնապահպանական ու սոցիալական կառավարման համակարգի պլան (ԲՄԿՀ պլան), որը զարգացման տարբեր փուլերում՝ սկսած աշխատանքների վաղ փուլից մինչև շինարարության, շահագործման և ապա փակման փուլերում հնարավոր ռիսկերից ու ազդեցություններից խուսափելու, դրանց նվազեցման ու մեղմման նպատակով ներառում է ԲՄԱԱ կառավարման պլաններ և ՄՇԸ-ներ: Սույն պլանը ի պատասխան Ծրագրի իրականացման տարբեր փուլերի ընթացքում առաջ եկող փոփոխությունների պետք է պարբերաբար վերանայվի ու թարմացվի:

Ընկերության ԲՄԿՀ շրջանակներում մշակվել են ընդգրկուն թվով կառավարման պլաններ, որի նպատակը տարբեր փուլերի ընթացքում ծագող տարբեր բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգության հետ առնչվող ռիսկերի մեղմումն է: Այլ, մշակվելիք պլանները ներառում են՝ Ածխածնի և էներգիայի կառավարման պլանները, Անվտանգության կառավարման պլանը, Տեղական Կադրերի ներգրավման և գնումների պլանը, թարմացված Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը, որը պետք է արտացոլի ԲՄԱԳ վերաբերյալ վերջին հանրային խորհրդակցության արդյունքները: Ներկայումս, նախքան շինարարության մեկնարկը, բոլոր կառավարման պլաններն իրականացման նպատակով գործնականացվում են (3-րդ մակարդակ):

Ինչպես վերևում արդեն նշվեց, Լիդիանը պայմանագիր է կնքելու շինարարական աշխատանքների կառավարման հարցերով խորհրդատվական ընկերության հետ (Praetorian Construction Management)՝ նպատակ ունենալով Ծրագիր ենթակառուցվածքների հետ առնչվող տարբեր աշխատանքների իրականացման նպատակով ապահովել մի քանի կապալառուներ: Լիդիանն ու Պրետորիանն ապահովելու են, որպեսզի ԲՄԱԳ-ում, ԲՄԱԱ-ում և ԱՀԱԿՀ-ում ներառված ծրագրային պարտավորությունները ներառվեն բոլոր մրցույթային փաստաթղթերում, իսկ հաղթող հայտատուից պահանջվելու է ԲՄԱԱ և ԱՀԱԿՀ մասով գործել բոլոր պահանջվող կառավարման պլանների ու ընթացակարգերի պահանջներին համապատասխան:

Ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում մանրակրկիտ կառավարման ենթակա լրացուցիչ խնդիրներից է հանքի շահագործման ընդլայնման հետ կապված նոր ստեղծված հնարավորությունների օգտագործմամբ հետաքրքրված մարդկանց հոսքը:

Կազմակերպական կարողություններ և կոմպետենցիաներ

Ընկերության կորպորատիվ կազմակերպական կառուցվածքում ներառված են՝ գործադիր նախագահը, նախագահը և գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր ֆինանսական տնօրենը (ԳՖՏ), Հայաստանյան գործադիր տնօրենը և Ծրագրի գլխավոր ինժեները: Կայուն կառավարման գծով գործադիր փոխնախագահը հեռացել է ընկերությունից 2016թ. սկզբին և փոխարինվել է շրջակա միջավայրի տնտեսվարության, առողջապահական և անվտանգության ծրագրերի ու կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բոլոր ասպեկտների կառավարման 25 տարվա միջազգային փորձ ունեցող մասնագետով: Նշանակվել է նաև գործադիր տնօրեն:

Ծրագրի շինարարության կազմակերպական կառուցվածքի հիման վրա, Կայուն կառավարման գծով ԳՓ Ծրագրի մակարդակով օժանդակություն է ստանում կայուն

կառավարման ու թույլատվությունների ստացման հարցերով կառավարիչի, բնապահպանական ու սոցիալական հարցերով կառավարիչների ու առողջության ու անվտանգության հարցերով կառավարիչների կողմից, որոնք էլ իրենց հերթին աջակցում են 6 բնապահպանական վերահսկիչներն ու տեխնիկները, 9 համայնքային կապերի և 2 առողջության ու անվտանգության հարցերով պատասխանատուները: Ընդհանուր առմամբ, ԲՄԱԱ ասպեկտներին Լիդիանում և Գեոթիմում հատկացված է 22 աշխատակից: Նախքան շինարարության մեկնարկը, ԲՄԱԱ անձնակազմի համար ընկերությունը մշակելու է համարժեք կադրային Ծրագիր (տես՝ ԲՄԳԾ # 3):

Արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն և արձագանքում

Իր ԲՄԱԱ ԿՀ շրջանակներում, ընկերության կողմից մշակվել է արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արտահոսքերի արձագանքման պլան (ԱԻՊԱԱՊ), որի նպատակը հանքի շինարարության և շահագործման ընթացքում միջադեպերի ու պատահարների առաջացման հնարավորության նվազեցումն է: Պլանում ներառված են երկրում իրականացվելիք բոլոր ծրագրային փուլերի գործողությունները, ներառյալ՝ Գեոթիմի գրասենյակներում և աշխատակիցների բնակեցման հանգույցներում, պահեստներում, հանքատար ճանապարհների վրա, ինչպես նաև բացահանքերում և մշակման հանգույցներում իրականացվողները: Այս փուլում պլանը ընդհանրական է և հարմարեցված չէ տեղամասում կիրարկման համար: Ինչպես արդեն նշվեց, 3-րդ փուլի ԿՀ փաստաթղթերի մաշակման շրջանակներում մշակվելու է համապարփակ ԱԻՊԱԱՊ, որում ներառվելու է տեղական համայնքների ներգրավման գործընթացը (ինչպիսին է ՏՄԱԻՏՊ գործընթացի ուղեցույցը) (տես՝ ԲՄԳԾ #1):

Սույն պլանի շրջանակներում սահմանվում է արտակարգ իրավիճակների արձագանքման թիմ և մասնավորեցվում է, որ ընկերության բոլոր աշխատակիցները բոլոր կապալառուների և ենթակապալառուների հետ միասին ճամբարում հրահանգավորման և միջադեպերի ու պատահարների սցենարների ու արձագանքման վերաբերյալ պարբերական ու առավել մասնագիտացված ուսուցման միջոցով պետք է անցնեն ԱԻՊԱԱՊ վերապատրաստում: ԱԻՊԱԱՊ հետագայում լրամշակվելու է՝ ներառելով վտանգավոր նյութերի տեղափոխման, պահեստավորման, կիրառման հետ առնչվող ռիսկերը:

Մոնիտորինգ և վերանայում

ՄՖԿ պատշաճ հոգածության շրջանակներում, վարկատուների խումբը 2014թ. պայմանագիր է կնքել բնապահպանական ու սոցիալական հարցերով անկախ խորհրդատուի հետ (ԲՄԱԽ) գլխավոր վարկատուների պահանջների համապատասխան ՈԻԱԻ ընկերության կողմից մշակված ԲՄԱ գնահատման երրորդ կողմի կողմից վերանայման նպատակով: Այս գնահատման շրջանակներում ԲՄԱԱ ասպեկտների ու նախագծի վերաբերյալ մի շարք բացեր են հայտնաբերվել, որոնք լրացվել են ընկերության և դրա կապալառուների կողմից: Շարժվելով առաջ, առաջիկա շինարարության փուլի շրջանակներում, ընկերությունը պայմանագիր է կնքելու որակավորված ԲՄԱԽ հետ՝ շինարարական գործողությունների ԲՄԱԱ կանոնավոր ստուգումների և ԲՄԿՊների ու ԲՄԳԾ իրականացման նպատակով, որոնք

ներկայացվելու են վարկատուներին և մոնիտորինգի հաշվետվությունների տեսքով հրապարկվելու են (տես՝ ԲՍԳԾ #4):

Ծրագրի գոյություն ունեցող կառավարման համակարգի շրջանակներում կատարվում է ԲԱԱ պարամետրերի լայնածավալ ներքին մոնիտորինգ (Այդ թվում, աղտոտման կանխարգելում, էրոզիայի վերահսկում, ջրի որակ, առողջություն և անվտանգություն, տրանսպորտ, և այլն): Շրջակա միջավայրի մոնիտորինգի պլանը (ՇՄՄՊ) իրականացվելու է նախքան շինարարության մեկնարկը, որի նպատակն այս փուլի համար ԲՍԱԳ-ում, առանձին կառավարման պլաններում և օժանդակ ՄՇԸ-ներում սահմանված մոնիտորինգի բոլոր հատուկ քանակական ու որակական պահանջների հավաքագրումն է, որը կապահովի տարբեր բնապահպանական ասպեկտների համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին, ՄՖԿ ԿՄ-ներին, ԲԱԱ ուղեցույցներին ու ԱԼՄԳ-ին:

ԿՄ2: Աշխատանք և աշխատանքային պայմաններ

Աշխատանքային պայմաններ և աշխատանքային հարաբերությունների կառավարում

Գեոթիմի երևանյան գլխամասային գրասենյակում ներկայումս ուղղակիորեն զբաղված են 40, իսկ Ծրագրի տեղամասում՝ մետ 126 աշխատակիցներ (առանց կապալառուների): Շինարարության մեկնարկին ընդառաջ այս անձնակազմը ներկայումս ընդլայնվում է: Շինարարության պիլի ընթացքում կապալառուների հետ միասին աշխատակիցների ընդհանուր թիվը կհասնի 1300, որոնցից 400-ը կլինեն տեղաբնակներ: Շահագործման փուլի ընթացքում աշխատելու են մոտ 652 աշխատակիցներ, որոնց մեծամասնությունն կապալառուներ չեն լինելու: Լիդիանը ներկայումս ունի կադրային քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք համապատասխանում են ՄՖԿ ԿՊ2-ի պահանջներին: Նախքան շինարարության ու շահագործման փուլերի մեկնարկը, կադրային քաղաքականությունները և ընթացակարգերը թարմացվելու են՝ այս փուլերի համար աշխատուժի կազմային առանձնահատկությունների հաշվի առնման նպատակով (տես՝ ԲՍԳԾ #7):

Աշխատակազմի համալրման նպատակով Լիդիանը նախապատվություն է տալու Ծրագրի ազդակիր համայնքներից աշխատակիցներին, եթե նրանք ունեն համապատասխան որակավորում կամ անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման նպատակով կարող են ուսուցանվել: Տեղական կարողությունների հզորացման նպատակով վերջին 5 տարիների ընթացքում Լիդիանը երկրաբանի մասնագիտությամբ տեղական ուսանողներին կրթաթոշակներ է տրամադրել:

Բողոքարկման մեխանիզմ

Լիդիանն ունի բողոքարկման գործող պաշտոնական մեխանիզմ, որն առկա կադրային գործընթացների մասն է կազմում և ներկայացվում է բոլոր աշխատակիցներին: Շինարարչության և շահագործման փուլերի համար մշակվելու է ուղղակի և կապալառուների աշխատակիցներին ներառող բողոքարկման մեխանիզմ (տես՝ ԲՍԳԾ #7):

Երրորդ կողմի կողմից ներգրավված աշխատակիցներ

Շինարարության փուլի աշխատակիցների մեծամասնությունը աշխատանքի են ընդունվելու տեղական կապալառուների միջոցով: Կապալառուները պետք է համապատասխանեն ԿՍ2-ի պահանջներին: Լիդիանի կողմից դա ապահովվելու է պայմանագրերում պահանջների ներառման, ինչպես նաև ընկերության աշխատանքային քաղաքականությունների ու ընթացակարգերի պարբերական մոնիտորինգի ու կիրարկման միջոցով: Պայմանագրային աշխատողներն ընկերության բողոքարկման մեխանիզմի կիրառման վերաբերյալ ուսուցում են անցնելու: Ըստ անհրաժեշտության, պայմանագրային պարտավորությունների բավարարման համար պահանջվող կարողությունների զարգացումը կարող է տրամադրվել Լիդիանի կողմից:

Աշխատուժի և արհմիությունների պաշտպանություն

Լիդիանի ՄՌ քաղաքականության համաձայն, հարկադիր աշխատանքը և 18-ից ցածր աշխատակիցները չեն կարող աշխատանքի ընդունվել ընկերությունում: Ընկերությունում աշխատանքի կարող են ընդունվել միայն Հայաստանում իրավաբանորեն աշխատելու իրավունք ունեցող անձինք: Ընկերությունը կձեռնարկի տնտեսապես ողջամիտ բոլոր քայլերը, որպեսզի համոզվի, որ պայմանագրային աշխատողներ ներգրավվող երրորդ կողմերը հեղինակավոր և օրինական ձեռնարկություններ են, որոնք ունեն համապատասխան համակարգեր՝ ապահովելով իրենց կադրային քաղաքականության պահանջների համապատասխան գործունեությունը: Կադրային քաղաքականության շրջանակներում ճանաչվում է իրենց ընտրությամբ արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու, ինչպես նաև կոլեկտիվ բանակցությունների մասնակցելու աշխատակիցների իրավունքը: Մինչ օրս աշխատակիցները արհմիություն չեն ստեղծել կամ դրան անդամագրվել:

Աշխատանքի հիգիենա և պաշտպանություն

Ինչպես նշվեց ԿՍ1 կառավարման պլանների բաժնում, ԲՄԿՀ շրջանակներում ընկերությունն մշակել է աշխատանքի հիգիենայի ու անվտանգության կառավարման պլան: Ընկերության կողմի մշակվում է նաև OSHAS18001 պահանջներին համապատասխան ԱՀԱԿՀ, սակայն երկու կառավարման համակարգերը կարող են միձուլվել՝ 2016թ. 4-րդ եռամսյակում ISO 45001 նոր տարբերակի հրատարակումից հետո, որը թույլ կտա երկու կառավարման համակարգերի աննկատ ինտեգրումը:

Առողջության և անվտանգության ասպեկտները ներառվել են նաև կապալառուների կառավարման պլանում և Պպրետորին ընկերության հանձնարարվել է ծրագրի համար պատրաստել աշխատանքի հիգիենայի ու անվտանգության ձեռնարկի նախագիծը: Գոյություն ունեցող ԱՀԱԿՊ-ում հղվում են մնիշարք ստանդարտներ, որոնք մշակման փուլում են: ՄՖԿ նախնական ներգրավվածությունից մինչ օրս դիտարկվել է առողջության և անվտանգության վերաբերյալ իրազեկվածության և կատարողականության մակարդակի հետևողական բարելավում: 2013թ. աշխատած ժամերի քանակը չի գրանցվել, որպեսզի պարապուրդի հանգեցնող միջադեպերի հաճախականությունը (ՊՄՀ) և լրջության ցուցանիշը (ՊՄԼՑ) չգրանցվի, սակայն պատահարի պատճառով 21 աշխատանքային օր բաց է թողնվել: 2014թ. ՊՄՀ ցուցանիշը եղել է 1.04, իսկ ՊՄԼՑ՝ 3.1, ընդ որում, պարապ օրերի քանակը կազմել է 3: 2015թ.-ին երկու ցուցանիշներն էլ զրոյական են եղել: Դասընթացներին նվիրված ժամաքանակ

դեռևս պատշաճ կերպով չի գրանցվել, սակայն ամենշաբաթյա 1 ժամ տևողությամբ անվտանգության հանդիպումներին մասնակցում են մոտ 25 հոգի:

Տեղամասում իրականացվող աշխատանքների համար սահմանվել են հատուկ արձանագրություններ և ընթացակարգեր, ներառյալ՝ ակտիվի, ԱԱՄ օգտագործման, բոլոր աշխատանքների կոնկրետ ու ընդհանրացված ռիսկերի գնահատման վերաբերյալ: Ձմեռային շրջանում իրականացվող աշխատանքների, ՍԱՇՇների ընթացակարգերը ևս պատրաստվել են և պարբերաբար իրականացվում են ԱևԱ բրիֆինգներ: Տեղամասում կարող է տրամադրվել տարրական առաջին օգնություն: Շինարարությանն ընդառաջ ընկերությունը զարգացնում է բուժօգնության մակարդակը: Ծրագրում բոլոր աշխատակիցների ու այցելուների համար առկա է հրահանգավորման գործընթաց:

Ի լրումն, Կապալառուները պետք է գործեն ԿՍ2-ի պահանջներին համապատասխան և Լիդիանի կողմից դա ապահովվելու է պայմանագրերում այդ պահանջների ներառման, ինչպես նաև ընկերության աշխատանքային քաղաքականությունների ու ընթացակարգերի պարբերական մոնիտորինգի ու կիրարկման միջոցով: Պայմանագրային աշխատողներն ընկերության բողոքարկման մեխանիզմի կիրառման վերաբերյալ ուսուցում են անցնելու:

ԿՍ3: Ռեսուրսարդյունավետություն և ախտոտման կանխարգելում

Ծրագրի տարածքում կլիմայական պայմանները բնութագրվում են որպես Մայրցամաքային Տաք: Նման կլիմայական պայմաններում տեղումներն առատ են (անձրև և ձյուն) ողջ տարվա ընթացքում, իսկ միջին ջերմաստիճանը տարվա չորս ամիսների ընթացքում (հունիսից սեպտեմբեր) բարձր է 10°C-ից: Ամառվա և ձմեռվա ջերմաստիճանը խիստ տարբեր է՝ կապված մայրցամաքային դիրքի հետ: Բարձրության փոփոխությունը մեծ դեր է խաղում Ծրագրի տարածքում: Ծրագրի տարածքում ձյան տեսքով տեղումները գալիս են բոլոր ամիսներին, բացառությամբ՝ հուլիս և օգոստոս ամիսների:

Ռեսուրսարդյունավետություն

Ծրագրի համար տեղամասի տարածքով անցնող առկա 110Կվ հզորությամբ հոսանքազեների հարևանությամբ նոր հիմնական ենթակայան է կառուցվելու, որի արդյունքում հզորությունը նվազեցվելու է մինչև 35Կվ: Հոսանքազեները տարվելու են հիմնական ենթակայանից փոխակրիչի երկայնքով արևելյան ուղղությամբ, ապա դեպի ջարդիչ կայան և փոխակրիչի երկայնքով արևմտյան ուղղությամբ դեպի բեռնատարների բեռնաթափման տարածք, ապա դեպի ԱԴՎ կայանի հարևանությամբ գտնվող ենթակայանի երկրորդ տարածք: հանքի տարածքում հոսանքի բաշման նպատակով տեղական ենթակայաններում 35Կվ իջեցվելու է մինչև 6Կվ: Տեղական ենթակայանի 6Կվ հոսանքազեների միջոցով էներգիա է մատակարարվելու ջարդիչներին ու փոխակրիչներին, բեռնատարների արհեստանոցին, գրասենյակներին, ԿՏՀ և ԱԴՎ հանգույցներին, ինչպես նաև գետի ջրամատակարարման պոմպակայանին:

Տեղամասի տրանսպորտային միջոցների համար դիզելային վառելիքը պահեստավորվելու է երկու տեղանքներում՝ բեռնատարների արհեստանոցի և պահեստի (ԴԱԼ-ի հարևանությամբ) բաքերում (մեկուսացված տարածքում) և ԱԴՎ կայանի բակում (մեկուսացված տարածքում): Վառելիքի պահեստավորումը պետք է իրականացվի մեկուսացված՝ մատակարարի կողմից տրամադրված կրկնաշերտ բաքերում: Դիզելային վառելիքի համար կիրառվելու են 580 000լ տարողությամբ վառելիքի պահեստավորման բաքեր, իսկ բենզինի համար՝ մոտ 50000 լիտրանոց բաքեր, որոնք այնպես են նախագծվելու, որպեսզի դրանցում հավաքվեն վերալիցքավորման տարածքից կամ խողովակաշարից արտահոսող նավթը, ավելցուկը կամ հոսակորուստները: Վառելիքի ավազանն այնպես է կառուցվելու, որպեսզի վառելիքի լիցքավորումն իրականացվի բետոնապատ հարթակի վրա: Վառելիքի բաքերը կունենան ստանդարտ մետաղյա կառուցվածք և շրջապատված կլինեն բերմայով կամ բետոնե եզրաքարերով, այնպես որ մեկուսացման տարածքում հնարավոր լինի մեկուսացնել ամենամեծ՝ 110% ծավալով բաքը:

Պարտավորությունների գրանցամատյանը ներառում է էներգիայի օգտագործմանն առնչվող մի շարք դրույթներ: Էներգարդյունավետության միջոցառումները ներառվելու են ճարտարագիտական նախագծում: Էներգիայի ակտիվ օգտագործումը, մասնավորապես ջարդիչ կայանի կողմից, պետք է գնահատվի և առաջարկվեն այլընտրանքային էներգարդյունավետ տարբերակներ (CR: GHG3, GHG7), լուսավորման համար CFL կամ LED էներգարդյունավետ տեխնոլոգիաներ, որոնք սովորական էլեկտրական լամպերից ավելի էներգարդյունավետ են (առկայության դեպքում): Ի հավելումն, օժանդակ կառույցներում նախապատվություն է տրվելու սենսորային լուսավորության կիրառմանը, որը ևս էներգիայի խնայման լավ միջոց է (CR: GHG1): Կառույցների ջեռուցման և սառեցման նպատակով դիտարկվելու է վերգետնյա և օդային աղբյուրներից սնվող պոմպերի կիրառումը (CR: GHG4):

Ջրերի կառավարում

Ամուլսար լեռը արևմուտքում Արփա և արևելքում Որոտան գետերի ջրհավաք ավազանների միջև հիդրոլոգիական սահման է, իսկ Դարբը, որը Արփայի վտակ է, հոսում է Ամուլսարից դեպի հարավ Արփա գետը հոսում է Ջերմուկ քաղաքից դեպի հարավ-արևմուտք և Ջերմուկի՝ պետության կողմից պահպանվող հիդրոլոգիական արգելավայրից և սնում Կեչուտի ջրամբարը: Այնտեղից գետը հոսում է դեպի հարավ՝ դեպի Դարբ գետի ավելի ընդարձակ ջրհավաք ավազան: Որոտան գետից և դրա ջրհավաք ավազաններից ջուրը հոսում է դեպի հարավ-արևելք՝ Սպանդարյան ջրամբար:

Ջրի որակի տեսանկյունից Արփա գետի որակը որոշ մետաղների պարունակությամբ գերազանցում է Հայաստանում սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ), ներառյալ՝ կոբալտը, երկաթը, լիթիումը, մանգանը, մոլիբդենը և նատրիումը: Որոտան գետի ջրի որակը որոշ մետաղների պարունակությամբ գերազանցում է Հայաստանում

սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ): Այդ մետաղների թվում են կոբալտը, երկաթը, լիթիումը և մանգանը: Ամուլսարից դեպի Որոտան և Դարբ գետեր հոսող որոշ ջրահոսքերում նույնպես բնական թթվային վիճակ (ջրածնային ցուցիչը ցածր է) և մետաղների բարձր կոնցենտրացիաներ է նկատվում: ՄԹԿ-ները գերազանցող պարամետրերը ներառում են վերոնշյալներն ու հետևյալ մետաղները՝ ալյումին, բերիլիում և պղինձ: Այս քիմիական բաղադրությունն արտացոլում է Ամուլսար լեռան տակ առկա մետաղներով հարուստ հանքամարմնի հետ շփման մեջ եղող ջրի ազդեցությունը:

Դարբ գետի ջուրը թույլ թթվային է, որի որոշ վտակների ջրի որակը չի համապատասխանում Հայաստանի ՄԹԿ-ներին: Ամռան ամիսներին, երբ ջրահոսքերը կրճատվում են, հոսքաջրերին նպաստող ստորգետնյա ջրերի ավելի մեծ քանակության պատճառով ջուրը փոքր-ինչ ավելի թթվային է դառնում: Քիմիական բաղադրության անալիզը ցույց է տալիս օրգանական քիմիկատների ցածր կամ չհայտնաբերվող մակարդակ, ինչը կապված է աղոտման գյուղատնտեսական կամ այլ անթրոպոգեն աղբյուրների հետ: Համայնքների կենցաղային և քաղաքային ջրամատակարարումն իրականացվում է հիմնականում ծանծաղ կախված ջրերից սնվող աղբյուրներից կամ ստորգետնյա ջրերից: Ջերմուկի ջուրը մատակարարումվում է աղբյուրների 4 խմբից, որոնցից մեկը՝ Մադիկենց աղբյուրը Ծրագրի տարածքում է: Կեչուտի ջրամբարի ջուրը ևս մատակարարվում է Մադիկենց աղբյուրից, որը գտնվում է քաղաքից մոտ 2կմ դեպի արևելք: Գնդեվազի, Սարավանի, Սարալանջի և Գորայքի ջրերը մատակարարվում են Ծրագրի հիդրավլիկ ազդեցության տարածքից դուրս գտնվող աղբյուրներից:

Ծրագրի տարածքում ստորգետնյա ջրեր առկա են մի քանի առանձին ջրհավաք ավազաններում, որոնք իրարից առանձնանում են Ամուլսարի լեռը շրջապատող գետերով: Հատկապես ամռանը, աշնանն ու ձմռանը՝ քիչ անձրևների դեպքում, գետերը սնվում են ստորգետնյա ջրերի հոսքից: Ծրագրի տարածքում և Ջերմուկում աղբյուրների ուսումնասիրությունները, ջրի քիմիական բաղադրության անալիզը (մեծ և փոքր լիցքով իոնների և իզոտոպային պարունակության փորձաստուգումները) ցույց են տալիս, որ Ջերմուկի հանքային ջրի հայտնի աղբյուրը չի սնվում Ծրագրի տարածքի ստորգետնյա ջրերից: Ուսումնասիրությունները պարզել են, որ ստորգետնյա ջրերն ուղղակիորեն չեն օգտագործվում Ծրագրի տարածքում կամ հարակից քաղաքներում և գյուղերում խմելու ջրի մատակարարման համար (ջրհորներից պոմպամղման միջոցով):

Ծրագրի համար ջրի կառավարման հիմնական նպատակը, ըստ հնարավորության, ջրօգտագործման, վերաշրջանառության և վերօգտագործման կրճատումն է, և այն դեպքում, եթե ջրի բացթողնումը շրջակա միջավայր անխուսափելի է, դրա որակի համապատասխանության ապահովումը: Ծրագրի նախագծման առաջնահերթություններից էր ապահովել, որպեսզի ջրային ռեսուրսները Ծրագրից էական ազդեցություն չկրեն: Հանքի կենսունակության բոլոր փուլերի ընթացքում ջրային ռեսուրսների լայնածավալ մոնիտորինգային ծրագիր է իրականացվելու: Այն կներառի ստորգետնյա ջրերի դիտահորեր, որոնք կտեղակայվեն հատուկ ջրերի որակի վրա ազդեցությունների հայտնաբերման նպատակով, բացահանքերից, ԴԱԼ-ից և ԿՏՀ-ից հոսանքն ի վար: Մոնիտորինգային ծրագիրը նախատեսվում է ստորև ներկայացված ազդեցության մեղմացման միջոցառումները ստուգելու համար, ինչպես նաև այն

կբացահայտի չկանխատեսված ազդեցությունները՝ հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում լրացուցիչ միջոցներ ձեռնարկել:

Հանքի ենթակառուցվածքներն այնպես են նախագծվելու, որպեսզի հոսքաջրերն ուղղեն հանգույցները շրջանցող ուղիներով: Ուղղակիորեն հանգույցներ լցվող ջուրը կմեկուսացվի և կօգտագործվի որպես տեխնիկական ջուր: ԿՏՀ-ն կունենա ծածկաշերտ (նախքան հանգույցի գործարկումը հոսակորուստների հայտնաբերման ուսումնասիրություն կիրականացվի) և կշահագործվի առանց արտահոսքերի, ԴԱԼ-ում տոփանված հողի շերտի վերևում հիմքային դրենաժային համակարգը կհավաքի հանգույց ներթափանցող ջրերը և կուղղի դրանք ԿՏՀ՝ օգտագործման նպատակով, հանքափոսերից ջրի հանումը ևս կիրականացվի առանց արտահոսքերի, եթե ջրի որակը չափամասշտախանի արտահոսքերին ներակայացվող սահմանափակումներին:

Տեխնիկական բոլոր ջրերը մաքրվելու են և նորից շրջանառվելու ԿՏՀ-ում: Հորդ անձրևների կամ ձնհալի դեպքում առկա կլինեն կուտակման բավարար տարողություններ: Կուտակման ավազանները կունենան կրկնակի գեոսինթետիկ շերտ, իսկ շերտերի արանքում՝ հոսակորուստների հավաքման և մաքրման համակարգեր: Տեղում հավաքված ջրերը տեղի շրջակա միջավայր բաց կթողնվեն միայն տղմագտիչ ավազաններում մաքրվելուց հետո՝ ջրթողման ստանդարտներին համապատասխան:

Ծրագրի շինարարության և շահագործման ընթացքում ջրօգտագործման նպատակով ջրառը կատարվելու է Արփա գետից: Համակարգչային մոդելների կանխատեսմամբ, շինարարության ընթացքում Արփա գետի հոսքի նվազումը չի գերազանցի 0.5%-ը, իսկ շահագործման ընթացքում՝ 4%-ը: Ջրառը կատարվելու է առկա ձկնաբուծարանից ներքև գտնվող ջրառի կետից, որը ազդեցության չի ենթարկվի: Հոսանքն ի վար ֆերմերները ևս ազդեցության չեն ենթարկվի: Մինչև շահագործման փուլի 5-րդ տարին բացահանքերից պոմպամղված բոլոր ջրերը, ԴԱԼ արտահոսքերն ու հոսակորուստները, ինչպես նաև բեռնատարների տեխսպասարկման կետից դրենաժը հավաքվելու և վերօգտագործվելու են: Այնուհետև, ԴԱԼ դրենաժի մի մասը կհոսի դեպի պասիվ մաքրման (խոնավ տարածք) համակարգ: Այս համակարգի արտահոսքերը պետք է համապատասխանեցվեն Հայաստանի օրենսդրությամբ սահմանված Սահմանային Թույլատրելի արտահոսքի չափանիշներին և բեռնաթափվեն հողի վրա կամ հոսեն դեպի Արփա գետ:

Ամուլսարի հանքային մարմնի հետ կապված դատարկ ապարների որոշ մասը օդի կամ ջրի հետ շփումից հետո կարող է դառնալ հնարավոր թթվազոյացնող: ԹԱԴ գոյացման ռիսկը մեծանում է թարմ արմատական ապարների մերկացումների առկայության դեպքում, և դա վերաբերում է շինարարության ու շահագործման հետ առնչվող գործողությունների հետ: Այս գործընթացը բնականորեն առկա է Ամուլսարի կողային հատվածներում, հատկապես այն հատվածներում, որտեղ կարմիր արմատական ապարները տեսանելի են: Սա է պատճառը, որ տարածքի բազմաթիվ ջրահոսքեր թեթև թթվային են: Ամուլսարի դատարկ ապարների փորձարկումների արդյունքում պարզվել է, որ լուծված մետաղներն էականորեն մտահոգիչ չեն, սակայն Ամուլսարի ԹԱԴ-ն բնորոշ է սուլֆատի բարձր մակարդակ և ջրածնային ցածր ցուցիչ: Ծրագրի հետփակման շրջանում, առկա է դատարկ ապարների լցակույտի տարածքից ԹԱԴ

գոյացման ռիսկ, որը պատշաճ կառավարման բացակայության դեպքում կարող է ազդել մակերևութային ջրերի վրա: Այդ պատճառով, փակումից հետո ԴԱԼ դրենաժը շարունակելու է հոսել դեպի ՊՄՀ: Հետփակման շրջանում այս ՊՄՀ որոշ մաքրման խցիկներ պետք է պարբերաբար ստուգվեն և փոխարինվեն:

Տեղամասի ջրային հաշվեկշիռն ու ջրերի կառավարման պլանը գործարկվելու են ցիանիդի կառավարման պլանի հետ միասին: Շահագործման ընթացքում, ցիանիդ պարունակող բոլոր լուծույթները կամ կեղտաջրերը վերաշրջանավելու են դեպի ԿՏՀ: Փակմանն ընդառաջ, ԿՏՀ լվացումից և չորացումից հետո, ցիանիդ պարունակող լուծույթները մաքրվելու են թունազերծման գործընթացի միջոցով՝ ըստ ՄՖԿ ԲԱԱ հանքարդյունահանման ուղեցույցի սահմանափակումների և ՑԿՍՕ ՍԹ արժեքների <0.5 մգ/լ կոնցենտրացիայով ԹԹԴ ցիանիդ ստանալու համար:

Ջերմոցային զազերի արտանետումներ

Ակնկալվող ՋԳ արտանետումները կրճատվել են ինժեներական նախագծային միջոցառումների արդյունքում: Ներառյալ գործողությունների օպտիմալացում՝ տրանսպորտային միջոցների տեղափոխման կրճատման նպատակով, սարքերի անգործության ժամանակահատվածի և տեղափոխման հեռավորության, կրկնակի աշխատանքների կրճատում: Կլիմային փոփոխության կանխատեսումները դիտարկվելու են ծրագրի մանրամասն նախագծման ընթացքում: Էներգարդյունավետության միջոցառումները ներառվելու են ճարտարագիտական նախագծում: Էներգիայի ակտիվ օգտագործումը, մասնավորապես ջարդիչ կայանի կողմից, պետք է գնահատվի և առաջարկվեն այլընտրանքային էներգարդյունավետ տարբերակներ, լուսավորման համար CFL կամ LED էներգարդյունավետ տեխնոլոգիաներ, որոնք սովորական էլեկտրական լամպերից ավելի էներգարդյունավետ են (առկայության դեպքում): Ի հավելումն, օժանդակ կառույցներում նախապատվություն է տրվելու սենսորային լուսավորության կիրառմանը, որը ևս էներգիայի խնայման լավ միջոց է: Կառույցների ջեռուցման և սառեցման նպատակով դիտարկվելու է վերգետնյա և օդային աղբյուրներից սնվող պոմպերի կիրառումը:

Մթնոլորտային արտանետումներ և աղմուկ

Ծրագրի տարածքում չկան քաղաքային և արդյունաբերական մեծ կենտրոններ, որոնք զազային և փոշու մասնիկների զգալի արտանետումների աղբյուր են: Գազային որոշ արտանետումներ մթնոլորտ են ներխուժում Ծրագրի շրջակայքում գտնվող բնակավայրերից, որպես կանոն, ավտոմեքենաների արտանետումների, կենցաղային ջեռուցման և հրդեհների հետևանքով, ինչպես նաև մոտակայքում գտնվող Կեչուտի աղբավայրից: Տեսողական տեսանկյունից, օդը Ծրագրի տարածքում և շրջակայքում պարզ և չաղտոտված է՝ առանց օդի աղտոտվածության հետևանքով առաջացող տեսանելի մառախուղի կամ մշուշի: Երբեմն կարելի է նկատել կենցաղային ծխի քուլաներ, ինչը պայմանավորված է բոլոր բնակավայրերում ցուրտ ձմռան ամիսներին վառարանների օգտագործմամբ:

Տեղական տարածքում արտանետումների ամենատարածված ձևը փոշին կամ մասնիկներն են: Դրանք արտանետվում են հողածածկ և ասֆալտապատ

ճանապարհներով անցնող տրանսպորտային միջոցների կողմից, կամ էլ, երբ քամին մասնիկներ է քշում փխրունացած պինդ նյութերի բաց պահեստարանից, հողի մակերեսից և հողածածկ ճանապարհներից: Մոնիթորինգը ցույց է տվել, որ երկու գազային աղտոտիչների՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների (SOx և NOx) ելակետային կոնցենտրացիաները օդում Ծրագրի տեղամասի շրջակայքում ցածր են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցների (ԱՀԿ) մակարդակներից: Այդ աղտոտիչները տարածված են քաղաքային բնակավայրերում, որտեղ առկա է ինտենսիվ ճանապարհային երթևեկություն, իսկ Ծրագրի տարածքում ակնկալվում են այդ աղտոտիչների ցածր կոնցենտրացիաներ:

Շինարարության և շահագործման ընթացքում փոշի կառաջանա հողաին աշխատանքների, հորատման, պայթեցման, բեռնման, տեղափոխման և այլ գործողությունների հետևանքով: Օդի մեջ այրման հետևանքով, օրինակ՝ շարժական սարքավորումների դիզելային շարժիչներից, պայթեցումի և կաթսայատներից առաջացած արտանետումները, ամենայն հավանականությամբ, ներառում են փոքր մասնիկներ (PM10) և այնպիսի գազեր, ինչպիսիք են ածխածնի երկօքսիդը (CO₂-ը) և ազոտի օքսիդը (NOx):

Ծրագիրը նախատեսում է մի շարք մեթոդներ տեղամասից արտագատվող ֆուգիտիվ փոշու արտանետումները կառավարելու նպատակով: Ջարդիչ կայանը կցված կլինի շինություններին՝ այսպիսով պարունակելով ջարդիչներից արտագատվող փոշին: Մանրացված հանքաքարը կտեղադրվի ծածկված փոխարկչի վրա, և փոխարկիչների երկայնքով ջրի շիթեր կօգտագործվեն այն կետերում, որտեղ նյութը պետք է փոխանցվի մեկ հոսքագծից մյուսին: Ջրի բարակ շիթերը կմաքրեն ֆուգիտիվ փոշին՝ կանխելով դրա ցրումը: Հանքատար և մերձատար այն ճանապարհները, որոնք փոշու արտանետումների հնարավոր աղբյուր կարող են հանդիսանալ, պետք է ջրցանել կամ մշակել վտանգ չներկայացնող քիմիական նյութերով՝ փոշու առաջացումը սահմանափակելու համար: Փոշու առաջացումը կանխելու այլ միջոցառումների թվում են հանքի ճանապարհներին ավտոմեքենաների երթևեկության արագության սահմանափակումը, կույտային տարրավազման հրապարակի և ԴԱԼ-ի խոնավության պահպանումը և բուսածածկ տարածքների ապահովումը:

Տրանսպորտային միջոցներից և այլ այրման աղբյուրներից արտագատվող գազի արտանետումները վերահսկելու համար պետք է համապատասխան սարքավորումները պարբերաբար ստուգել, իսկ արտանետումների ներկառուցված սարքավորումները մշտապես պահել սարքին վիճակում: Ծրագրի տարածքի մերձակա համայնքներում առկա աղմուկի աղբյուրները քիչ են: Արդյունաբերական աղմուկի աղբյուրներն են՝ ջրի շշալցման երկու գործարանները, կաթի գործարանը և բենզալցակայանը: Բոլոր այս աղբյուրները գտնվում են Ջերմուկում: Աղմուկի այլ աղբյուրների առկայությունը այդ տարածքում պայմանավորված է M-2 և H-42 մայրուղիներով երթևեկությամբ և գյուղատնտեսական գործունեությամբ:

Աղմուկ առաջացնող շինարարական աշխատանքները ներառում են հողի և ապարների մաքրում և հեռացում (նաև պայթեցումները), ինչպես նաև հիմքի նախապատրաստում,

ցեմենտի, ինչպես նաև այլ բեռնատարների շարժիչների աշխատանքը: Հանքի շահագործման ընթացքում աղմուկ կարող է առաջանալ հորատման աշխատանքներից, պայթեցումներից, և հանքատար ճանապարհներով հանքաքար ու դատարկ ապարներ փոխադրող բեռնատարներից, ջարդիչ կայաններից և փոխակրիչների աշխատանքից: Գիշերային ժամերին (բացառապես շահագործման ընթացքում) աղմուկի կանխատեսվող մակարդակը կբարձրանա մինչև 2 dB Գնդեվագում և 1 dB Սարալանջում, Մարավանում և Կեչուտում: Այս աճը կրկին նկատելի կլինի, սակայն, այն անհանգստություն չի պատճառի: Աղմուկի մակարդակի բարձրացում այլ համայնքներում չի կանխատեսվում

Շինարարության փուլում պայմանների մոդելավորումը ցույց է տալիս, որ Ծրագրի գործողություններից առաջացող աղմուկը (ցերեկային ժամերին իրականացվող) Ծրագրի տարածքը շրջապատող որևէ տեղական համայնքում չի գերազանցի ֆոնային մակարդակը: Շահագործման փուլում պայմանների մոդելավորումը ցույց է տալիս, որ թեպետ ՀՀ օրենսդրության շրջանակներում թույլատրելի մակարդակները չեն գերազանցվի, սակայն Գնդեվագում աղմուկի ֆոնային մակարդակը կգերազանցի մինչև 2 dB(A)-ով: Այս հանգամանքը տհաճություն չի պատճառի:

Ջարդիչ կայանները կմեկուսացվեն, իսկ փոխարկիչները կծածկվեն աղմուկը նվազեցնելու նպատակով: Որտեղ պահանջվում է, կօգտագործվեն աղմկամեկուսիչներ, խլացուցիչներ կամ խլարարներ աղմկոտ ֆիքսված տեխնիկայի շուրջ: Ինքնաթափ բեռնատարները և այլ շարժական սարքերը կլինեն ժամանակակից և կպահվեն մշտապես սարքին վիճակում: Մասնավորապես աղմուկ առաձայնող աշխատանքները նախատեսված է իրականացնել ցերեկային ժամերին, երբ հնարավոր է: Հարակից համայնքները և շահագրգիռ կողմերը պետք է տեղեկացվեն պայթեցման աշխատանքների ժամանակացույցի մասին, որպեսզի ազդակիր մարդիկ իմանան՝ երբ են սպասվում ակնթարթային օդային պայթեցումներ: Պայթեցումները պետք է նախագծված լինեն այնպես, որպեսզի նվազագույնի հասցվեն պայթեցման արդյունքում առաջացող օդի և գրունտի տատանումները:

Տեխնիկական ու կեղտաջրերի մաքրում

Հանքի ենթակառուցվածքներն այնպես են նախագծվելու, որպեսզի հոսքաջրերն ուղղեն հանգույցները շրջանցող ուղիներով: Ուղղակիորեն հանգույցներ լցվող ջուրը կմեկուսացվի և կօգտագործվի որպես տեխնիկական ջուր: Տեխնիկական բոլոր ջրերը մաքրվելու են և նորից շրջանառվելու ԿՏՀ-ում: Հորդ անձրևների կամ ձնհալի դեպքում առկա կլինեն կուտակման բավարար տարողություններ: Կուտակման ավազանները կունենան կրկնակի գեոսինթետիկ շերտ, իսկ շերտերի արանքում՝ հոսակորուստների հավաքման և մաքրման համակարգեր: Տեղում հավաքված ջրերը տեղի շրջակա միջավայր բաց կլթողնվեն միայն տղմագտիչ ավազաններում մաքրվելուց հետո՝ ջրթողնման ստանդարտներին համապատասխան:

Մինչև շահագործման 5-րդ տարին հանքափոսերից հանվող ջրերը, ԴԱԼ-ից հոսակորուստներն ու հոսքաջրերը, ինչպես նաև հանքի մեքենա-մեխանիզմների վերանորոգման արտադրամասից հոսքաջրերը ամբողջությամբ հավաքվելու և

սպառվելու են շահագործման ցիկլում: Այնուհետև, ԴԱԼ-ից ցամաքուրդի մի մասը կհոսի դեպի պասիվ մաքրման համակարգ (կամ գերխոնավ տարածքներ): Մաքրման համակարգից ջրաելքերը կհամապատասխանեն Հայաստանում գործող ՍԹԿ-ներին, և դրանք կդատարկվեն Արփա գետում:

Կենցաղային ջրերի մաքրման համար հետևյալ կետերում կտեղադրվեն կոյուղու բիո-ռեազենտ կամ սեպտիկ համակարգեր, ներառյալ՝ աշխատակիցների ճամբարում, ԱԴՎ կայանում/վարչական շինություններում, առաջնային և երկրորդային ջարդիչ կայաններում, մեքենա-մեխանիզմների վերանորոգման արհեստանոցում:

Բիո-ռեազենտները, սեպտիկ բաքերը և տարրավացման դաշտերն ենթադրաբար կընտրվեն որպես Ամուլսարի ծրագրի սանհագույցի թափոնների հեռացման նախընտրելի մեթոդներ: Այս փուլում նախագիծը միայն հայեցակարգային է. համակարգի չափորոշման համար կիրառվել են ձեռնարկներում ներկայացված օրինակները, որպեսզի հնարավոր լինի նախահաշիվ կազմել: Տեխնիկական նախագծման փուլում անհրաժեշտ կլինի իրականացնել մանրամասն ուսումնասիրություն և երկրաբանատեխնիկական/ներթափանցման փորձաստուգում:

Պինդ թափոնների կառավարում

Ոչ վտանգավոր և վտանգավոր թափոնների կառավարման նպատակով ընկերությունը թափոնների կառավարման ռազմավարություն է ընդունելու, որը զարծնականացվելու է թափոնների կառավարման պլանի միջոցով և կենտրոնանալու է թափոնների առաջացման կանխարգելման, նվազեցման, վերաօգտագործման, վերամշակման ու վերջնական հեռացման վրա: ԴԱԼ-ի հարևանությամբ ոչ վտանգավոր թափոնների համար աղբավայր է զարգացվելու:

Նախագծի հիմքում ՀՀ, ՄՖԿ/ՀԲԽ և ԵՄ պահանջներն են: Այս աղբավայրում տեղադրվելու են միայն ոչ վտանգավոր նյութեր և իներտ թափոններ: ԱԴՎ կայանում փոքր քանակությամբ կուտակված սնդիկն ապահով կերպով կպահվի փակ կոնտեյներում և կտեղադրվի երկրում կամ արտերկրում առկա համապատասխան հավաստագրված վտանգավոր թափոնների աղբավայրում հաստատություն: Թափոնների հեռացման հանգույցները շահագործվելու են այն եղանակով, որը ներառում է բաց աղբի պարբերական ծածկումը հողով կամ մանրախիճով: Սա կնվազեցնի այնպիսի կենդանիների ու թռչունների վտանգի ենթարկման ռիսկն ինչպիսիք են՝ գորշ արջը և Սպիտակագլուխ անգղը, որոնք պոտենցիալ վտանգավոր թափոններում պարբերաբար կեր են հայթայթում:

Ներկայումս, երկրում չկան վտանգավոր թափոնների մաքրման ու հեռացման թույլատրված օբյեկտներ սահմանափակ են վերամշակման պաշտոնական հնարավորությունները, իսկ վտանգավոր թափոնների կառավարման կարողություններն անբավարար են: Ծրագրի շրջանակներում առաջացած վտանգավոր թափոնների կառավարումը ենթադրում է դրանց ժամանակավոր տեղադրումը Սևանալճի ջրհավաքից դուրս ԿՏՀ հարևանությամբ գտնվող համապատասխան անանցանելի ջրամբարներում: Ընկերությունը ներկայումս գտնվում է աղբակեզ

վառարանի գնահատման և հետագայում ձեռքբերման գործընթացում, որի նպատակը վտանգավոր և սորուն թափոնների, այդ թվում՝ նավթային պարունակող թափոնների (այդ թվում՝ հիդրավլիկ խողովակներ և նավթի ֆիլտրեր), ցիանիդի փաթեթավորման և այլ թափոնների մաքրումն է: Այս հանգույցի օպերատորները ևս պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն:

Ցիանիդի կառավարում

Ծրագրի բաղադրիչները և գործընթացները (ինչպես օրինակ, բեռնաթափման և պահեստավորման տարածքը, խառնման/ վերամշակման արտադրամասը, ԿՏՀ, լուծույթների ավազանները և հարակից խողովակաշարերը) այնպես են նախագծվել, որպեսզի համապատասխանեն Ցիանիդի Կառավարման Միջազգային Օրենսգրքի (ՑՄԿՕ) պահանջներին: ԲՄԿՊ շրջանակներում ցիանիդի կառավարման պլան է մշակվել, որում հաշվի են առնված արդյունաբերական կոնկրետ լավագույն միջազգային գործելակերպի պահանջները: Այս պահանջներից մի քանիսը ներառում են. ցիանիդի գնումն ու տեղափոխումը ՑՄԿՕ լիազորված արտադրողների և փոխադրողների կողմից, չորացված բրիկետների տեսքով ցիանիդի ռեագենտների տեղափոխումը հատուկ չժանգոտվող պողպատյա ISO ստանդարտներին համապատասխանող առաքուման/խառնման կոնտեյներներում, ուժեղ ցիանային լուծույթի պահեստավորումը թթուներից ու այլ ռեակտիվ նյութերից առանձին, բոլոր ցիանային լուծույթների տեղափոխման, խառնման, տարրավազման ու թունագերծման բաքերի համար երկրորդային պաշտպանական ծածկույթի ապահովում, ցիանային գազերի կուտակումների կանխարգելում և ԿՏՀ/ԱԴՎ արտադրամասերի շահագործման կանոնների համաձայն, մշակման կայանի ու ԿՏՀ ամենօրյա մոնիտորինգ և կառավարում:

Հանքի շահագործման ընթացքում նատրիումի ցիանիդի գնման, տեղափոխման ու օգտագործման նպատակով ընկերությունը դառնալու է ՑՄԿՕ ստորագրող կողմ և հավաստագիր է ստանալու (տես՝ ԲՄԿՕ #7):

Վտանգավոր նյութերի կառավարում

Քիմիական նյութերը և վառելանյութերը կոնօրինվեն հանքարդյունաբերական ոլորտի լավագույն միջազգային փորձին համապատասխան: Վառելանյութերը և հեղուկ քիմիական նյութերը կպահուստավորվեն երկրորդային մեկուսացման բաքերի տարողության առնվազն 110%-ն ունեցող տարածքում: Քիմիական նյութեր և վառելանյութեր փոխադրող մեքենաները արտահոսքի հայտնաբերման նպատակով տեխսպասարկում և տեխզննում կանցնեն: Քիմիական նյութերի և յուղերի հոսակորուստների հատուկ պարագաների հավաքածուներ առկա կլինեն բոլոր համապատասխան վայրերում: Քիմիական նյութերի և վառելանյութերի տնօրինման մանրամասն ընթացակարգերը ներառված են բոլոր համապատասխան կառավարման պլաններում:

Աշխատավայրում վտանգավոր նյութերին առնչվող առողջության և անվտանգության ընդհանրական ստանդարտ է մշակվել, որտեղ սակայն տեղամասում օգտագործվելիք վտանգավոր նյութերի տեսակները մասնավորեցված չեն: Ծրագրի տարբեր փուլերում

օգտագործվելիք վտանգավոր նյութերը ներառում են. դիզելային վառելիք, բենզին, ԱՆՆՎ և օժանդակ նյութեր (պայթուցիչ, լարեր) քսայուղեր, հիդրավլիկ հեղուկներ, նատրիումի ցիանիդ, հիդրավլիկ թթվային լուծույթ, նատրիումի հիդրօքսիդի լուծույթ, նստվածքների արգելակիչ նյութեր, .ցիկլի փոշի և այլ քիմիական ռեագենտներ և լաբորատոր քիմիկատներ:

Կառավարման համակարգի շրջանակներում ընկերության կողմից մշակվելու է վտանգավոր նյութերի մանրամասն կառավարման պլան/ ստանդարտ շահագործական ընթացակարգ, որի նպատակը նավթամթերքների ու վտանգավոր նյութերի տեղափոխման, պահեստավորման ու օգտագործման համապատասխանեցումն է ԱԼՄԳ-ին (տես՝ ԲՄԳԾ #1): Առկա արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արտահոսքերի արձագանքման պլանը ևս շարունակելու է լրամշակվելու այս նյութերի տեղափոխման ու տնօրինման հետ կապված արտակարգ իրավիճակների ներառման նպատակով:

ԿՄ4: Համայնքի բնակչության առողջություն, ապահովություն և անվտանգություն

Համայնքի բնակչության առողջություն և անվտանգություն

Ծրագրից բխող համայնքի բնակչության առողջություն և անվտանգություն վրա հիմնական ազդեցությունները կապված են վտանգավոր նյութերի ու անձնակազմի տեղափախման ռիսկերի, մակերևութային ջրերի աղտոտման, ինչպես նաև առողջապահական խնդիրների հետ, որոնք կարող են խորանալ մարդկանց ներհոսքի և աշխատողների ու տեղական համայնքների միջև փոխազդեցությունների արդյունքում:

Հայաստանն ունի հյուսիս - հարավ ճանապարհը , M-2 մայրուղի, որը ձգվում է Վրաստանի տարածքով, Հայաստանով – Երևանով, անցնում Ծրագրի տարածքի մոտակայքով և կապում է երկիրը Իրանի հետ: Այն Երևանից դեպի Ծրագրի տարածք տանող հիմնական ճանապարհային երթուղին է: Ճանապարհն ունի ամուր մակերես և գտնվում է ընդհանուր առմամբ բավարար վիճակում: Այս ճանապարհը կլինի հիմնական մերձատար երթուղին դեպի Ծրագրի տարածք արտերկրից սարքավորումներ և անհրաժեշտ պարագաներ տեղափոխելու համար: Ծրագրի տարածքում հիմնական ճանապարհային հանգույցներին, որտեղ ուսումնասիրվում է երթևեկությունը, տրանսպորտային միջոցների քանակը կազմում է երթևեկության առավելագույն մակարդակի ընդամենը 15% -ը: Հանքից դուրս եկող և մտնող ճանապարհային երթևեկության ծավալներն էականապես մեծանալու են՝ հանգեցնելով ճանապարհային միջադեպերի ու աղմուկի ավելացված ռիսկին: Ճանապարհային ենթակառուցվածքն ունի բավարար կարողություններ ավելացած երթևեկության հոսքի սպասարկման համար:

Ենթակառուցվածքների ու սարքավորումների նախագծում և անվտանգություն

Ծրագիրը ենթակառուցվածքների ու սարքավորումների նախագծման մեջ հաշվի առել համայնքների հարևանությանը և դրանց կողմից առավել լայն տեղամասի օգտագործումը օրինակ անասունների արածեցման և բույսերի հավաքման նպատակով:

Սա ներառում է փոխակրիչի տակ գետնանցումներն ու առանցքային տարածքի շուրջ ցանկապատումը:

Ծրագրի տարածքում գտնվող համայնքներում հասանելի բժշկական ծառայություններն ու հիվանդանոցները բավարար են այդ տարածքում ապրող բնակիչների թվաքանակի համար: Կա նաև գործող շտապօգնության համակարգ, սակայն խնդիրներ կան մատակարարման հետ կապված, քանի որ տեղական մասնավոր դեղատների թիվը խիստ սահմանափակ է: Ուսումնասիրված բոլոր համայնքներում գործում են խմելու ջրի խողովակային համակարգեր, սակայն Գորայքի և Սարավանի խողովակային ջրի որակը չի համապատասխանում խմելու ջրի միջազգային չափանիշներին: Գյուղական համայնքներում կոյուղու համակարգեր հիմնականում չկան: Կենցաղային աղբահանությունը սահմանափակ է, և Գեոթիմը համայնքին աջակցություն է ցուցաբերում այդ հարցում՝ սկսած հետազոտական աշխատանքների դեռևս վաղ փուլից: Ջերմուկ քաղաքում խմելու ջուր և կենցաղային աղբահանությունը ավելի հասանելի են, քան շատ այն գյուղական համայնքներում, սակայն Ջերմուկ և Կեչուտ համայնքներում ջրի որակը անհանգստություն է առաջացնում: Ջերմուկում կեղտաջրերի հեռացման գործարանը վերջերս արդիականացվել է, և այժմ գործարանի նախագծային հզորությունը կազմում է 22 000 մարդ, ինչը գերազանցում է ներկայիս պահանջարկը:

Վտանգավոր նյութերի կառավարում և անվտանգություն

Ծրագրային գործընթացների ընթացքում կամ օժանդակ ծառայությունների միջոցով մի շարք վտանգավոր քիմիական նյութեր կարող են օգտագործվել (արտադրվել), որոնցից ամենակարևորը ցիանիդին է, որն օգտագործվելու է կույտային տարրավազման հարթակներում հանքաքարի աղբատացման գործընթացի նպատակով: Ցիանիդի կառավարումն իրականացվելու է Ցիանիդի Կառավարման Միջազգային Օրենսգրքի (ՑՄԿՕ) շրջանակներում: Ցիանիդի Կառավարման շրջանակային պլանն արդեն մշակվել է, իսկ Ցիանիդի Կառավարման Միջազգային Օրենսգրքի պահանջների բավարարման համար պահանջվող առնչվող փաստաթղթերն ու ընթացակարգերը մշակվելու են հետագայում: Ցիանիդի Կառավարման Միջազգային Օրենսգրքն անդրադառնում է ցիանիդի տեղափոխմանն ու օգտագործմանը, ներառյալ՝ այն համայնքների ներգրավվածությունը, որտեղով տեղափոխվում է ցիանիդը և որտեղ այն օգտագործվում է: Այլ վտանգավոր նյութերի կառավարման ծրագրերը համապատասխանեցվելու են ՄՖԿ ԿՍՅ պահանջներին: Տեղում իրականացվելու է բոլոր վտանգավոր նյութերի ռիսկերի գնահատում և աշխատակիցների ու համայնքի առողջության պաշտպանության նպատակով մշակվելու են անհրաժեշտ ծրագրեր:

Ներկայիս առողջապահական վիճակը համայնքում

Հայաստանում հիմնական առողջապահական մտահոգությունները կապված են ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) հետ: Ուսումնասիրության տարածքում առողջապահական բեռը հիմնականում ընկնում է սիրտ – անոթային հիվանդությունների, քաղցկեղի և շաքարախտի վրա, որոնք համարվում են ամենատարածված առողջական խնդիրները: Տարածքում սեռական ճանապարհով

փոխանցվող հիվանդությունների մակարդակը ցածր է: Նմանապես, չնայած որ տուբերկուլյոզը առկա է Հայաստանում, ուսումնասիրվող տարածքում այդ հիվանդության ընդամենը մի քանի դեպք է արձանագրվել: Ծրագրի տարածքի գյուղական համայնքներում արձանագրվել է ռադոնի բարձր մակարդակ, հատկապես Գորայքում: Ռադոնի մակարդակը կապված չէ Ծրագրի գործունեության հետ, այն տարածքի երկրաբանության հետևանքն է: Ակնկալվում է, որ Ծրագիրը առողջապահական բարելավումներ կիրականացնի մի շարք համայնքներում: Դա վերաբերում է ջրի, սանիտարական պայմանների և աղբահանության հետ կապված հիվանդությունների նվազեցմանը՝ կառուցվածքային բարելավումների, թափոնների կառավարման և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ պրոֆիլակտիկ կրթության միջոցով: Սպասվում է նաև, որ Ծրագիրը կարող է առողջության և անվտանգության հետ կապված որոշակի բացասական հետևանքներ ունենալ: Հիմնականում դա վերաբերում է սեռական ճանապարհով տարածվող հիվանդությունների տարածման ռիսկի մեծացմանը, ճանապարհային պատահարների թվի աճին և արդյունահանող ընկերության ու ազդակիր համայնքների միջև նոր բախումների ռիսկին: Աշխատողների բնակեցումը փակ ճամբարում, նույնպես կարող է ռիսկային լինել վարակիչ հիվանդությունների, նաև տուբերկուլյոզի տարածման առումով:

Հանքում աշխատողների բարձր աշխատավարձը կարող է հանգեցնել սոցիալական խնդիրների առաջացման, ներառյալ՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (ՍՃՓՀ) և ալկոհոլի սպառման ծավալների մեծացման: Ծրագրի շրջանակներում աշխատողների հարմարությունների հիբրիդային մոդել է մշակվելում, որը նախատեսում է աշխատողների մեծամասնությունը բնակեցվելու փակ ճամբարներում, իսկ մոտ 1/3-ին՝ ջերմուկի ծայրամասի հյուրանոցներում: Ջերմուկում աշխատողների բնակեցման հնարավոր ազդեցությունը դիտարկվել է ԲՄՍԳ-ում և կառավարվելու է Աշխատողների Բնակեցման կառավարման պլանի (ԱԲԿՊ) միջոցով (ԲՄՍԳ # 1):

Ծրագիրը կկառավարի սեռական առողջության հետ կապված խնդիրները մի շարք եղանակներով: Ուղղակի հաղորդակցություն կհաստատվի աշխատուժի հետ քաղաքականության, վարքագծի և կրթական ծրագրերի միջոցով, որոնք կխրախուսեն պատասխանատու և հարգալից վարքը հյուրընկալող համայնքներում, կարգելի սեռական ոտնձգությունները: Ծրագրի համար մշակվել է ՄԻԱՎ քաղաքականություն: Իսկ սեռական առողջության խթանման և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելման ծրագրերը կտարածվեն միջազգային փոխադրումներ իրականացնող բեռնատարների վարորդների վրա՝ ապրանքների առաքման համար պատասխանատու կապալառուի աջակցությամբ: Աշխատողների բնակեցման համար օգտագործվող կամ կառուցված բոլոր շինությունները կհամապատասխանեն միջազգային չափանիշներին՝ վարակիչ հիվանդությունների փոխանցման ռիսկը նվազեցնելու նպատակով: Ծրագիրը աշխատանքային հիգիենայի և շտապ օգնության միջոցով կապահովի, որպեսզի իր բուժճառայությունները համապատասխանեն աշխատուժի կարիքներին:

Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և արձագանքում

Հանքարդյունաբերության և առնչվող գործունեության հետ կապված պատահարների աճի ռիսկի հետ առնչվելով՝ Ծրագիրը մշակել է համայնքի բնակիչների առողջության ու անվտանգության կառավարման պլան և մշակելու է համապատասխան ստանդարտ շահագործական ընթացակարգեր՝ հիմնվելով նախատեսված աշխատանքների, ներառյալ՝ ներհոսքի հավանականության ռիսկերի գնահատման վրա (ԲՄԳԾ # 1): Դա ներառում է արտակարգ իրավիճակներին արձագանքման պատրաստվածության ծրագրեր, ինչպես համայնքային, այնպես էլ աշխատավայրում պատահարների համար: Լիդիան ընկերությունը հրապարակել է Աշխատանքային անվտանգության և առողջության քաղաքականություն Ծրագրի համար և դրա հետ կապված կառավարման պլան, որն ընդգրկում է բոլոր այն ասպեկտները, առողջապահության և անվտանգության պահանջները, որոնք պետք է պահպանվեն շինարարության, շահագործման և փակման փուլերի ընթացքում: Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արտահոսքի արձագանքման պլանում ճանաչվում է ՏՄԱԻՏՊ տիպի գործընթացի իրականացման կարևորությունը (տեղական մակարդակում արտակարգ իրավիճակների մասին տեղեկացվածություն և պատրաստվածություն) և պարտավորությունների գրանցամատյանում այն ընդգրկված է որպես նախաշինարարական փուլի պարտավորություն (CHS73): ԱԻՊԱԱՊ հետագայում լրամշակվելու է՝ բացիա ցիանիդից այլ վտանգավոր նյութերի նրառման նպատակով:

Պատահարները կանխելու նպատակով Ծրագիրը կիրականացնի հետևյալ միջոցառումները. Ծրագրի տարածք մատակարարումներ կատարող ծանր բեռնատար ավտոմեքենաների համար արագության սահմանափակում, շահագործման պիտանիության չափանիշների կիրառում տրանսպորտի կառավարման պլանի միջոցով(տես՝ ԲՄԳԾ # 1) և թմրանյութերի ու ալկոհոլի դեմ պայքարի քաղաքականության կիրառում:

Անվտանգության անձնակազմ

Տեղամասի ծայրամասերի պաշտպանության նպատակով շինարարության փուլի ընթացքում ընկերությունն չզինված անձնական անվտանգության աշխատակիցներ է վարձելու: Շահագործման փուլի ընթացքում, արտադրված ոսկու պաշտպանության նպատակով տեղամասում առկա են լինելու սահմանափակ թվով զինված անվտանգության աշխատակիցներ: Ռիսկերի նույնականացումը և մասնավոր ու հանրային անվտանգության անձնակազմի կառավարումը պաշտոնապես կձևակերպվեն շինարարության և շահագործման փուլերի համար անվտանգության ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման ծրագրի միջոցով, որը պետք է համահունչ լինի ԿՍ4 պահանջներին (տես՝ ԲՄԳԾ # 10): Սա ներառելու է անվտանգության անձնակազմի պատշաճ վերապատրաստումը: Համայնքների գանգատարկման մեխանիզմը կհարմարեցվի անվտանգության անձնակազմի վերաբերյալ գանգատների դիատարկման համար (տես՝ ԲՄԳԾ # 6): Պետական անվտանգության ամենամոտիկ հենակետերը Ջերմուկում տեղամասից 10կմ հեռավորության վրա են գտնվում:

ԿՍ5 Հողի ձեռքբերում և ոչ կամավոր տարաբնակեցում

Ծախսերի օպտիմալացման արդյունքների արտացոլման նպատակով հողի իրավունքի ձեռքբերման և կենսամիջոցների վերականգնման պլանի (ՀՁԿՎՊ) և դրա հավելվածի մշակման նպատակով 2015թ. Լիդիանը հանձնարարել է միջազգային խորհրդատվական կազմակերպություն ներգրավել: ՀՁԿՎՊ-ը և դրա հավելվածը ներառում են 135հա մասանվոր հողակտորների ձեռքբերումը, ինչպես նաև պետության և համայնքապետարանի կողմից տնօրինվող և սեզոնային հովիվների կողմից օգտագործվող (ամառային սեզոնիո երկորյա ճանապարհ են անցնում) 5 հա հողերի վրա ազդեցությունը: Ամենօրյա կտրվածքով տարածք այցելող հովիվներն օգտագործում են փոխակրիչի 30մ լայնությամբ միջանցքի տարածքը (հարևան Գնդեվազ գյուղի հովիվներ): Ընկերություն պարտավորվում է համապատասխանել միջազգային ստանդարտներին, ներառյալ՝ ՄՖԿ ԿՍ5-ի պահանջներին՝ ըստ կիրառելիության, ոչ կամավոր տարհանումը ծրագրի այլընտրանքային նախագծի բացահայտման միջոցով կանխելու կամ առնվազն կրճատելու միջոցով:

ՀՁԿՎՊ-ում դիտարկված են պետական ու համայնքային հողերի վրա բացահանքերի ու հանքարդյունահանման հետ ուղղակիորեն առնչվող հանգույցների (ներառյալ՝ դատարկ ապարների տեղադրումը, պայթուցիկների պահեստը, ջրի պահեստավորումն ու ճամբարները) շինարարության նպատակով հողի ձեռքբերման հետ կապված ազդեցությունները: Այս հողերը ամառային սեզոնի ընթացքում (մայիս-սեպտեմբեր) անասունների արածեցման նպատակոց ներկայումս օգտագործվում են մոտ 50 սեզոնային հովիվների կողմից: Հողերը հովիվներին տրամադրվում են վարձակալության պայմանագրերով, որի համար համայնքապետարանին վճարումը կատարվում է տարեկան կտրվածքով: ԿՏՀ և ոսկու կորզման արտադրամասը տեղակայված են մասնավոր հողակտորների վրա, որոնք հիմնականում այգիների (օր.՝ ծիրանի) տակ օգտագործվող վարելահողեր են: Այս տարածքում ծրագրի նպատակով անվերադարձ օտարվելու են 150 տնային տնտեսություններին պատկանող 238 մասնավոր հողակտորներ (138.9 հա): Ի լրումն, 30մ լայնությամբ փոխակրիչի միջանցքն ազդելու է 20 տնային տնտեսություններին պատկանող 22 հողակտորների վրա (13հա), որոնք հիմնականում օգտագործվում են խոտհարքի համար: Վերջապես, ԿՏՀ առավել լայն տարածքում ձեռք են բերվելու 14 հողակտորներ, որի արդյունքում հողակտորների ընդհանուր թիվը կկազմի 274: Ծախսերի օպտիմալացման արդյունքում փոխակրիչի միջանցքի վրա ազդեցությունը 83 հողակտորից և 45.3 հա-ից նվազեցվել է: Սկզբում, փոխակրիչի միջանցքի տարածքը առաջարկվում էր ձեռք բերել հանքի շահագործման ամբողջ ընթացքի կտրվածքով վարձակալության պայմանագրի միջոցով, սակայն հողի սովականատերերի հետ խորհրդակցության արդյունքում պարզ դարձավ, որ նրանք նախընտրում են վաճառել դրանք:

Հետևաբար, այս հողերի ձեռքբերումն ընկերության կողմից կատարվելու է նախքան շինարարության մեկնարկը:

Տեղամասի ընտրություն

Հանքի ենթակառուցվածքի ու ԿՏՀ ավարտական տեղանքի ընտրությունը հիմնված են բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները ներառող այլընտրանքային վերլուծության, ինչպես նաև ՀՀ Կառավարության կողմից 2013թ. հուլիսի 8-ին ընդունված

թիվ 143-Ն որոշման վրա, որի համաձայն Սպանդարյան-Կեչուտ թունելի յուրաքանչյուր կողմում պետք է պահպանել 3000 մետր սահմանափակ գոտի:

Հիմնվելով ծրագրի նախագծի ու տարաբնակեցման մասնագետների միջև իտերատիվ գործընթացի վրա, 2014թ. հոկտեմբերին, ծրագիրը նախաձեռնել է տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, որի արդյունքում որոշում է կայացվել խուսափել ոչ կամավոր ֆիզիկական տարհանումից և գյուղատնտեսական հողերի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված էական ջանքեր են ներդրվել:

Հետագայում, 2015թ. նոյեմբերին, իրականացվել է նաև ծաղսերի օպտիմալացման ուսումնասիրությունը, որի նպատակը ծրագրի նախագծի օպտիմալացումն ու կապիտալ ծախսերի կրճատումն է: Ուսումնասիրվող տարածքում տարածման գոտու փոփոխությունները համեմատաբար փոքր են, իսկ հիմնական հանգույցների տեղանքներն անփոփոխ են մնացել ինչպես բնօրինակում: Սակայն փոխակրիչի ու ԿՏՀ հանգույցների հատակագծում փոքրածավալ փոփոխությունների կատարման համար անհրաժեշտ է ձեռք բերել 22 հողակտոր կազմող լրացուցիչ վարելահողեր:

Տարածում

Ծրագրի շարժանակներում 2015թ. ապրիլին պաշտոնականացվել է հողի ձեռքբերման ու փոխհատուցումների տրամադրման ճանապարհային քարտեզը: Ծրագիրը բանակցային եղանակով ձեռք է բերել հողատերերի կամավոր համաձայնությունը՝ օտարման տարբերակը կիրառելով որպես վերջին հնարավորություն՝ բանակցության ողջամիտ հնարավորությունների սպառման դեպքում: Մինչ օրս բանակցային եղանակով ձեռք են բերվել 252 հողակտորներ, իսկ մնացած 3-ը հողատերերի բացակայության և այլ բարդությունների պատճառով իրավական կարգով օտարման գործընթացում են գտնվում: Փոխակրիչի միջանցքի համար պահանջվող 22 հողակտորները ձեռք են բերվելու նախքան շինարարության մեկնարկը:

Լիդիանի կողմից սոցիալական զարգացման գծով մենեջերին ու ծրագրի թիմին վերաբնակեցման գործընթացի ժամանակ խորհրդատվության տրամադրման նպատակով աշխատանքի է ընդունվել վերաբնակեցման միջազգային փորձագետ, որն աշխատելու է ծրագրի իրականացման ու մոնիտորինգի ողջ ընթացքում:

Հանքի փակումից հետո, հանքի և օժանդակ ենթակառուցվածքների հողերը, բացառությամբ բացահանքերի, ըստ ԲՄԱ գնահատման հանքի փակման ու տարածքի վերականգնման պլանի իրականացումից հետո վերադարձվելու են հողատերերին:

Փոխհատուցում և տեղահանված անձանց տրվող արտոնություններ

Հանքի ազդակիր տարածքի գյուղերում կենսամիջոցների հիմնական աղբյուր են հանդիսանում գյուղատնտեսությունը և անասնապահությունը: Կենսամիջոցներն ապահովվում են նաև սննդարտադրությունն ու կերարտադրությունը, արտադրանքի վրա հիմնված փոքրամասշտաբ բիզնեսները (օր.՝ բանրի կարագի արտադրությունը): Կրթության, առողջապահության ոլորտներում կամ կառավարության կառուցվածքում պաշտոնական զբաղվածությունը սահմանափակ է:

Հողակտորների ու մշակամրույսերի վրա ազդեցության գնահատման նպատակով ներգրավվել են երկու ազգային փորձագետներ: Բաց թողնված օգուտների փոխհատուցումը հիմնված է ՀՀ հողերի օտարման օրենքով սահմանված շուկայական արժեքի և 15 տոկոսի չափով հավելման վրա: Մեկամյա և բազմամյա մշակամրույսերի գնահատման մեթոդըն ըստ ԿՍ5 ուղեցույցների, մշակվել է ազդակիր համայնքների հետ խորհրդակցության պայմաններում, որի արդյունքում պտղատու ծառերի գերհասունության հետևանքով գնահատման մեթոդաչափի թեթև փոփոխությունների է ենթարկվել (օր.՝ ծիրանի ծառեր):

Վերաբնակեցման ու կենսամիջոցների վերականգնման միջոցառումներ

Թեպետ ՀՀԿՎՊ-ում սահմանվում են «հողիդիմաց հող» փոխհատուցմանը վերաբերող դրույթներ հողատերերն ընտրել են կանխիկով փոխհատուցումը, քանի որ նրանք ունեն այլ ազդեցության չենթարկված հողակտորներ, որոնք կարող են օգտագործել: Ի սկզբանե, միայն հինգ տնային տնտեսություններ էին հետաքրքրված հողով փոխհատուցմամբ, սակայն ի վերջ նրանք ևս խնդրեցին կանխիկով փոխհատուցում տրամադրել: 2015թ. կենսամիջոցների ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել են 20 խոցելի տնային տնտեսություններ, որոնք ստացել են թիրախային օժանդակությունը և պետք է ենթարկվեն շարունակական մոնիտորինգի:

Կանխիկ փոխհատուցման ռիսկերը ծրագրի կողմից մեղմվել են 2015թ. հոկտեմբերին կազմակերպված դրամական միջոցների և շահույթի կառավարման օժանդակությամբ և ձեռնարկատիրության խթանման դասընթացների միջոցով: Ծրագրի ազդակիր մարդկանց պահանջով ձեռնարկատիրության խթանման դասընթացները շարունակվել են, ինչը ներառվել է կենսամիջոցների վերականգնման ծրագրում: 2016 թ.-ին իրականացված վերաբնակեցման գործընթացի անկախ միջանկյալ աուդիտի արդյունքում պարզ վել է, որ տնային տնտեսությունների մեծ մասն հատկացված փոխհատուցումն օգտագործել է առկա պարտքերի մարման ու նոր տների կիսառուցման նպատակով:

Կենսամիջոցների վերականգնմանն ուղղված ներկայիս գործողությունները մշակվել են ծրագրի ազդակիր համայնքների հետ խորհրդակցության պայմաններում և ներառում են ռոռզման ջրանցքի զարգացումը, մրգերի չորանոցի և պանրի արտադրության կոռպերատիվի, անասնաբուժական, այգեգործական, տնկարանային տնտեսության ծրագրերի օժանդակությունը և ձեռնարկատիրության զարգացման դասընթացները: Ծրագրի կողմից ձեռքբերված հողերից աԱզդակիր տնային տնտեսությունները բերքահավաք են իրականացրել 2015թ. սեզոնի ընթացքում: Գնահատման ժամանակ կենսամիջոցների վերականգնմանն ուղղված առաջին գործողությունները ձեռնարկված են եղել՝ ներգրավելով ազդակիր հողատերերի մոտ 50%-ին: Կենսամիջոցների վերականգնման ծրագրերն առաջարկվում են կամավոր հիմունքներով և պահանջարկից կախված, հողերի ձեռք բերումից հետո 3 տարի շարունակ կարող են տրամադրվել: ԿՎՊ ուրվագիծը ներառված է ՀՀԿՎՊ-ում և համայնքներին լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրվել ամսագրի միջոցով: Նախքան շինարարության մեկնարկը, Լիդիանի կողմից կատարվելու է ԿՎՊ թարմացում՝ հիմնվելով կենսամիջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների առաջին փուլից

ստացված փորձի վրա, որից հետո պլանը հասանելի է դարձվելու համայնքի իրավասու անդամների համար (տես՝ ԲՄԳԾ # 11)։

Ընկերությունն օժանդակություն է ցուցաբերել այն սեզոնային հովիվներին, ովքեր գրկվելու են իրենց տնտեսական գործունեության շրջանակներում արածեցման ու խոտհարքի նպատակով որպես այլընտրանքային բացահայտված համայնքային հողերի օգտագործումից։ Պահանջվող ենթակառուցվածքով (հանքատար ճանապարհներ և ջուր) համայնքներին մոտ այլընտրանքային հողերը բացահայտվել են հովիվների հետ խորհրդակցության արդյունքում, որից հետո Գորայքի գյուղապետարանի հետ հովիվների կողմից նախկինում վճարած նույն դրույքաչափով վարձակալության պայմանագիր է կնքվել։

Գնդեվազից ամեն օր եկող հովիվների համար իրենց արոտավայրերի հատվածը պահպանվելու է՝ փոխակրիչի միջանցքի հատվածում երեք անցուղիների միջոցով մուտքի սահմանափակմամբ։ Այս մեղմման միջոցառման արդյունավետությունը խիստ վերահսկվելու է անկախ խորհրդատուի կողմից վերաբնակեցման մոնիտորինգի պլանի միջոցով։

Յուրաքանչյուր ազդակիր տնային տնտեսության համար լայնածավալ մոնիտորինգի ծրագիր է մշակվել։ Կենսամիջոցների վրա հետագա ազդեցության և կենսամիջոցների վերականգնման ծրագրի արդյունավետության չափման նպատակով մշակվել է բոլոր տնային տնտեսությունների պրոֆիլը։ Կենսամիջոցների վրա ազդեցությունը և կենսամիջոցների վերականգնման ծրագրերի արդյունավետությունը վերահսկվելու են տարեկան կտրվածքով՝ հողի ձեռքբերումից հետո առնվազն 3 տարիների ընթացքում։ Եթե մոնիտորինգի արդյունքում հայտնաբերվի, որ կենսամիջոցների վերականգնման նպատակները կատարվել են, ապա 3-րդ տարում իրականացվելու է ավարտական անկախ աուդիտ։ Ըստ անհրաժեշտության այս ավարտական աուդիտը կարող է հետաձգվել մինչև կենսամիջոցների համապատասխան բարելավումը (տես՝ ԲՄԳԾ# 4)։

Համայնքի ներգրավում և գանգատարկման մեխանիզմ

Հողի ձեռքբերման պլանավորման և իրականացման համար իրականացվել է հանրային խորհրդակցություն և տեղեկատվության լուսաբանում։ Թեպետ ՀԶԿՎՊ հրապարակվել է փոխհատուցման պայմանագրերի ստորագրման ժամանակ, տեղեկատվությունը համայնքներին ներկայացվել է հողի մատչելիության և փոխհատուցման ուղեցույցի (ՀՄՊՈԻ) միջոցով, որը շրագրի տարածքում լուսաբանվել է 2014թ. հուլիսին։ Լիդիանի կողմից 2015թ. ձեռնարկված անկախ աուդիտի արդյունքները ևս ցույց են տալիս, որ ՀՄՊՈԻ մեջ ներառված տեղեկատվությունը բավարար է եղել տեղեկացված մասնակցության պահանջներին համապատասխանության համար։

ՀԶԿՎՊ-ում ներառվել է նաև գանգատարկման գործընթացը, որը մշակվել է 2014թ.-ին դրա իրականացման միջոցով ուսուցանված անձնակազմի կողմից։ Գանգատարկման մեխանիզմը համայնքներին ներկայացվել է 2015թ. կեսերին։ Մինչ օրս հողի ձեռքբերման ընթացքում մի քանի գանգատներ են արված ազդակիրներին։ Սակայն,

շինարարության ընթացքում առաջացած բողոքների հասցեագրման նպատակով անձնակազմը շարունակելու է աշխատել:

ԿՄԾ կենսաբազմազանության պահպանություն և բնական ռեսուրսների կայուն կառավարում

Ծրագրի տարածքն ընկած է Կովկասյան խառը անտառների էկոշրջանում, որը Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից ճանաչվել է որպես Համաշխարհային 200 էկոշրջան ավելի մեծ Կովկասյան էկոշրջանի սահմաններում: Ծրագրի ազդեցության տարածքը ներկայումս չի ներառում այն անտառների տեսակները, որոնք գտնվում են էկոշրջանի առաջնահերթությունների շրջանակում, սակայն որոշ ցրված մնացորդներ առկա են Ծրագրի ազդեցության տարածքի եզրերին և շրջապատող լանդշաֆտներում՝ որպես այդպիսին ստեղծելով վերականգնման հնարավորություն: Ծրագիրը տեղակայված է Թռչունների պաշտպանության կազմակերպության (Birdlife International) կողմից սահմանված 2 կարևորագույն թռչնաբանական տարածքների (ԿԹՏներ) սերտ հարևանությամբ: Գորայքի կարևորագույն թռչնաբանական տարածքը (ԿԹՏ) տեղակայված է բացահանքերից մետ 700մ դեպի հարավ, իսկ Ջերմուկը՝ ԿՏՀ-ից 500մ դեպի հյուսիս-աարևմուտք: Այս տարածքներից խուսափելու նպատակով ծրագրի նախագիծը փոփոխության է ենթարկվել (ավելի վաղ տարբերակում ֆիզիկական տարածման գոտին մասամբ համընկնում էր Գորայքի ԿԹՏ հետ):

Ծրագրի ազդակիր տարածքում ներառված է 1805հա տարածք զբաղեցնող այսպես կոչված «բնական հաբիտատ»: Այս տարածքում մարդկային գործունեության, օրինակ՝ արածեցման արդյունքում, որը տարածքում հողօգտագործման ավանդական ձև է, առանձնանում են փոփոխված և որոշ «կիսաբնական» հաբիտատներ: Վերոնշյալ 1805 հա տարածքը ներառում է նաև այնպիսի տարածքներ, որտեղ ակնկալվելու են փոշու նստեցում և աղտոտում, ինչպես նաև այնպիսի տարածքներ, որտեղ հողօգտագործումն ու մուտքը սահմանափակվելու են: Բնական կենսամիջավայրի կեսից ավելին ներկայացված են ալպյան տարրերով և ժայռային մերկացումներով ենթալպյան մարգագետիններով:

Ծրագիրն ազդելու է Մատունի Ծիրանավոր *Potentilla porphyrantha* բուսատեսակի պոպուլյացիայի մի մասի վրա, որը կրիտիկական կենսամիջավայր է համարվում: Ծրագիրն ազդելու է նաև գորշ արջի (*Ursus arctos*) բնական կենսամիջավայրի վրա, որը ԲՊՄՄ կողմից դասակարգվել է որպես քիչ մտահոգիչ (Least Concern), սակայն ՀՀ կարմիր գրքում գրանցած է որպես խոցելի (Vulnerable): Ծրագրի տարածքում և դրա հարակից տարածքներում, ներառյալ՝ Ջերմուկ ազգային պարկում առկա է գորշ արջի պոպուլյացիա:

Տեղամասը ազգային և/կամ միջազգային մակարդակով Endangered կարգավիճակ ունեցող որոշ բնադրող և միգրող թռչունների հաբիտատ է հանդիսանում: Այդ տեսակներն են՝ սպիտակագլուխ անգղը (Neophron percnopterus) (Endangered), Սև անգղը (Aegyptius monachus) (Near Threatened), Տափաստանային մկնաճուռակը (Circus macrourus) (Near Threatened), Մեծ ենթարծիվը (Aquila clanga) (Vulnerable), Բլրային

արծիվը (*Aquila heliaca*) (*Vulnearble*) և Կարմրասոս բազեն (*Falco vespertinus*) (*Near Threatened*):

Թեպետ այս տեսակների վրա ծրագրի էական ազդեցություն չի ակնկալվում, մանրամասն նախագծման ընթացքում դիտարկվելու են ազդեցությունների մեղմման տարբերակներ: Մեղմման միջոցառումները ներառում են օրինակ թափոնների կառավարումը, որի նպատակը թափոնավայրերում կեր հայթայթող Մպիտակագլուխ անգղի ոխակի ենթարկման կանխումն է, կամ բնադրավայրերում ազդեցությունների կանխման նպատակով հողապատնեշների կառուցումը, ինչպես նաև հոսանքագծերի մեկուսացումը և դեֆլեկտորների տեղադրումը: Հնարավոր չնախատեսված ազդեցությունների հայտնաբերման ու ադապտիվ կառավարման իրականացման նպատակով մոնիտորինգն իրականացվելու է ծրագրի ողջ ընթացքում:

2008թ. սկսած տեղական, ազգային և միջազգային փորձագետների աջակցությամբ իրականացվել են լայնածավալ ուսումնասիրություններ և հավաքվել են այլ կենսաբազմազանության հետ առնչվող ելակետային տվյալներ: Նախնական ելակետային ուսումնասիրություններ են իրականացվել 2008 և 2011թթ ընկաշ ժամանակահատվածում: Բացահայտվել է նաև կենսաբազմազանության որոշ տարրերի վերաբերյալ մանրամասն ուսումնասիրությունների անհրաժեշտությունը: Լրացուցիչ դաշտային ուսումնասիրություններ են իրականացվել 2012թ.-ին, որի նպատակը ծրագրի ազդակիր տարածքում բուսատեսակների կազմի բացահայտումն էր: 2013 և 2014թթ. տեսակի գույքագրման նպատակով իրականացվել են *P. Porphyrantha* բուսատեսակի պոպուլյացիայի մանրամասն ուսումնասիրություններ: Այս բուսատեսակի համար իրականացվել է նաև բազմազան մեխանիզմների ու պոպուլյացիայի մոդելավորման հետազոտություն: 2013թ., կատարարվել է չվող գիշատիչ թռչունների գնահատում: 2014թ.-ին բնադրող, ջրլող թռչունների ու չղջիկների ուսումնասիրություն է կատարվել: 2015թ. Ամուլսար լեռան վրա և առավել ընդարձակ տարածքում կատարվել է գորշ արջի մանրամասն ելակետային ուսումնասիրություն, որի ընթացքում կիրառվել է ոչ ինվազիվ գենետիկ նշագրման ու տեսախցիկներով տեսագրման տեխնիկաները: 2015թ.-ին կատարվել է նաև երկկենցաղների ու սողունների լրացուցիչ ուսումնասիրություն:

ԲԱՍԱԳ շրջանակներում Բնական ու կրիտիկական կենսամիջավայրի գնահատումը (ԲԿԿԳ) պատրաստվել է ՈՒԱԻ ընկերության կողմից: Ծրագրի տեղադրությունը և նախագիծը ներկայացվել են Էկոլոգիական ուսումնասիրությունների արդյունքների, ԲԿԿԳ և ԲՍԱԳ գործընթացի հիման վրա: Կանխարգելման ու նվազեցման միջոցառումները մշակվել են դեռևս վաղ փուլում: Տեղում կիրառման ենթակա կենսաբազմազանության մեղմման միջոցառումները, որոնք իրականացվելու են նախագծի, շինարարության, շահագործման ու շահագործումից դուրս բերման շրջանակներում ներառված են կենսաբազմազանության կառավարման պլանում (ԿԿՊ), որում սահմանվում են նաև կապալառուների կողմից կիրառման ենթակա պարտավորությունները: Սույն ԿԿՊ իրականացվելու է ծրագրի ԲՍԿՀ շրջանակներում:

Ինչպես սահմանվել է ԲՍԳԾ թիվ 16-ում, մոնիտորինգի պահանջները ներառվելու են ծրագրի կենսաբազմազանության կառավարման ու գնահատման պլանում (ԿԿԳՊ), որը

մշակվելու է բնական կենսամիջավայրում զուտ կորուստների բացառման ու կրիտիկական կենսամիջավայրում զուտ օգուտների ձեռքբերման հետ կապված ծրագրի պարտավորությունների ցուցադրման նպատակով: Ինչպես սահմանվել է ԲՍԳԾ թիվ 16-ում, մինչդեռ երկարաժամկետ ԿԿԳՊ մշակման փուլում է, շրագիրը շարունակելու է արջերի ու տարբեր թռչնատեսակների մոնիտորինգի իրականացումը:

Պատրաստվել և իրականացվելու է բնական կենսամիջավայրում զուտ կորուստների բացառման ու կրիտիկական կենսամիջավայրում զուտ օգուտների ձեռքբերման (*P. porphyrantha*) նպատակ հետապնդող Կենսաբազմազանության գործողությունների ծրագիր (ԿԳԾ): ԿԳԾ ներառում է հետևյալը. Բնական և կրիտիկական կենսամիջավայրում իրականացման ենթակա մի շարք համապարփակ կանխարգելիչ, նվազեցման և վերականգնման միջոցառումներ, տեսակներին առնչվող 2 գործողությունների ծրագրեր (ՏԳԾներ)՝ մեկը *P. Porphyrantha*, իսկ մյուսը՝ գորշ արջի համար, և կենսաբազմազանության համար առանձնացված տարածքների ռազմավարություն: *P. porphyrantha* տեսակի համար ՏԳԾ-ը ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ բույսերի կուտակումներից խուսափելու համար ծրագրի ճանապարհների ու ենթակառուցվածքի իզոգծերի պատրաստում, փոշու նվազեցման համար բեռնատարների փոխարեն փոխակրիչի կիրառում, պոպուլյացիայի առնվազն 20%-ը (և հարակից ենթալայան մարգագետնային կենսամիջավայր և այլ տեսակներ) ներառող առանձնացված տարածք, այսպիսով ստերիլիզացնելով ռետուսի մի մասը, պրոգրեսիվ վերականգնում, տեսակների հետազոտման ու տրանսլոկացիայի ծրագիր, բացահանքերի փուլային զարգացում՝ թույլ տալով տեսակի բնապահպանական պահանջների ուսումնասիրությունը, և հանքի փակումից հետո կենսամիջավայրի վերականգնում: Ինչպես նշված է ԲՍԳԾ # 15-ում, ծրագրի շրջանակներում իրականացվելու է 5-ամյա դիտարկում, որպեսզի ապահովվի մոտեցման համապատասխանությունը՝ ապահովելով *P. Porphyrantha* զուտ օգուտները՝ ինչպես նշվում է ԿԳԾ-ում:

Կենսաբազմազանության համար առանջնացվող տարածքների ռազմավարության մեջ ներկայացված նկարագրության համաձայն, ներկայումս առաջարկվող Ջերմուկի ազգային պարկի ստեղծումը կօժանդակի էական մնացորդային ազդեցությունների փոխհատուցմանը: Ջերմուկ ազգային պարկի զարգացման առաջարկները աջակցվել են WWF Հայաստանի կողմից, կառավարության ծրագրերի մասն են կազմում և կախված են ռետուսներից և միջոցներից: Որպես բնական կենսամիջավայր համապատասխան պահանջներին համապատասխանության համար առաջարկվող ազգային պարկի ստեղծման կայունության սահմանման նպատակով Ծրագիրն իրականացրել է կենսաբազմազանության նախնական էլակետային ուսումնասիրություններ: Նոր ազգային պարկի ստեղծման նպատամբ վերաբերմունքի ստուգման նպատակով իրականացվել է նաև շահագրգիռ կողմերի նախնական շրջանակի սահմանում և ներգրավում: Ծրագիրը մշակել է նաև կենսաբազմազանության կորուստներն ու օգուտներն արտացոլող ցուցանիշ:

Ծրագրի ԲՍԱԳ և հետագա գնահատումների վրա հիմնվելով, սահմանվել է, որ Ջերմուկ ազգային պարկի հիմնումը կարող է կայուն համատեքստ ապահովել առանձնացվող

տարածքի համար՝ միևնույն ժամանակ փոխանցելով բնության պահպանությունը Ջերմուկի տարածքում:

Այս տեսանկյունից ծրագիրը պարտավորվել է 5 տարով ստեղծել Ջերմուկ ազգային պարկ, որից հետո ծրագիրը շարունակվելու է ֆինանսավորել փոխհատուցման հետ կապված միջամտությունները համապատասխանաբար 25 տարով՝ հանքարդյունահանման պլանավորված ժամկետի տևողության չափով: Փոխհատուցման հետ կապված միջամտությունները ներառվելու են ազգային պարկի կառավարման պլանում, որի մոնիտորինգի արդյունքների համար պատասխանատվություն է կրելու Լիդիանը: Ծրագրային գործողությունները ներառվելու են ԲՄԳԾ թիվ 14-ում նշված փոխհատուցման կառավարման պլանում: Հնգամյա ստեղծման փուլից հետո երկարաժամկետ ֆինանսավորման կարիքների գնահատում պետք է իրականացվի, որպեսզի ինչպես նշված է ԲՄԳԾ թիվ 15-ում մշակվեն կայուն ֆինանսավորման մեխանիզմներ: Այս արդյունքները ներառվելու են փոխհատուցման կառավարման պլանում:

Էկոհամակարգային ծառայությունների տեսանկյունից, ԲՄԱԳ շրջանակներում իրականացվել է դրանց սիստեմատիկ դիտարկում, որի նպատակը առաջնային էկոհամակարգային ծառայությունների բացահայտումն է: Համայնքների համար առաջնահերթ էկոհամակարգային ծառայությունների վրա սահմանված առավել էական մնացորդային ազդեցությունները կապված են սեզոնային ու ամենօրյա հովիվների համար արոտավայրերի ու խոտհարքների մատչելիության սահմանափակման հետ: Գնդեվազից որոշ ֆերմերներ ևս հողակտորներ են կորցնելու, որտեղ բարձրորակ ծիրանի այգիներ են: Ծրագրի գործողությունների արդյունքում լանդշաֆտային փոփոխությունները ևս զգալի են լինելու՝ հիմնականով ազդելով Գնդեվազի վրա: Կենսամիջոցների ու պարեն ապահովման ծառայությունների վրա ազդեցությունները մեղմվելու են ծրագրի հողի ձեռքբերման իրավունքի և կենսամիջոցների վերականգնման պլանում ներառված միջոցառումների միջոցով, իսկ տեսողական ազդեցությունն ըստ հնարավորության նվազեցվել է ծրագրի նախագծման ընթացքում, նաև դիտարկվել է հանքի փակման ու վերականգնման պլանում:

ԿՄ 8 մշակութային ժառանգություն

Ծրագրի տարածքը ենթարկվել է բռնագավթման սկսած Պալեոլիթի դարաշրջանից (2.5 միլիոն տարի առաջ- 10,000 տարի մ.թ.ա.) մինչ նեկայիս ժամանակաշրջանը: Տարածքը կրում է շատ քաղաքակրթությունների հետքեր՝ սկսած ասորիներից մինչև Օսմանյան կայսրություն: Հիմնվելով հայկական կնազիտական թիմը ԲՄԱԳ դաշտային հետախուզության արդյունքների վրա տեղանքում հայտնաբերվել են 487 հայտնի կամ հավանական շակութային ժառանգության վայրեր, որոնց մեծամասնությունը դամբարաններ, դամբանախցեր, դամբանաբլուրներ կամ կուրգաններ են: Դրանցից 138-ը գնահատվել են կարևորության տեսանկյունից, սակայն դրանցից ոչ մեկը չսահմանվել որպես կրիտիկական: հարկ է նշել, որ ծրագրի տարածքում կաող են լինել լրացուցիչ չհայտնաբերված վայրեր: Մատչելի ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ հանքի շինարարությունն ազդելու է 81 հնագիտական վայրերի վրա, թեպետ

դրանցից ոչ մեկը մշակութային ժառանգության ազգային կամ միջազգային փորձագետների կողմից չեն սահմանվել որպես մեծ կարևորության:

Մշակութային ժառանգության հետ կապված Լիդիանի պարտավորությունների շրջանակներում կատարվել է բազմաթիվ ծրագրային բաղադրիչների վերանախագծում, որի նպատակը մի քանի վայրերի վրա ազդեցության կանխումն է: Ծրագրի շրջանակներում մշակվել է մշակութային ժառանգության կառավարման պլան (ՄԺԿՊ), որը ներառում է հայտնի մշակութային ժառանգության վայրերից խուսափելու և նշագրման քաղաքականությունը, մակերևույթի հետախուզման, պեղման ու հնագիտական գնահատման շարունակականություն, մշակութային ժառանգության ճանաչման և համապատասխան շահագրգիռ կողմերի, ներառյալ համայնքի ղեկավարների մասնակցությամբ խորհրդակցական գործընթացի կազմակերպման նպատակով բոլոր կապալառուների և ծառայությունների մատակարարների վերապատրաստում:

Գտածոների պաշտպանության նպատակով ՄԺԿՊ ներառելու է նաև գտածոների ընթացակարգերի ու արձանագրությունների իրականացում: Սա ներառում է մշակութային ժառանգության իրազեկվածության վերաբերյալ ծրագրի անձնակազմի ուսուցում՝ ներառյալ մշակութային ժառանգության վերաբերյալ անկախ խորհրդատվություն՝ շինարարության և ծրագրի հնագիտական թիմի կողմից շինարարության և շահագործման փուլում ներկայացված հաշվետվությունների ստուգման նպատակով: Բացի այդ, ծրագրի տարածքում մշակութային ժառանգության վայրերի պեղումները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությանն ու միջազգային ստանդարտներին ու կոնվենցիաներին և մշակութային ժառանգության մասնագետների վերահսկմամբ պետք է համակարգվեն ՀՀ մշակույթի նախարարության կողմից:

Շահագրգիռ կողմերի ներգրավում

2007թ.-ին ծրագրում ՄՖԿ ներգրավման հենց սկզբից ընկերությունը նյույնացրել է իր առանցքային շահագրգիռ կողմերին և ներգրավվել է վերջիններիս հետախուզական փուլի ընթացքում:

Հետախուզման, նախնական տեխնիկատնտեսական ու տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավման հիմնական նպատակը ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում շահագրգիռ կողմերի ու ծրագրի միջև երկկողմանի հողորդակցության հաստատումն է: Ներգրավման կիզակետում հետախուզական աշխատանքների ազդեցությունները և հանքի զարգացման պոտենցիալը, ինչպես նաև ԲՄԱԳ-ում և ծրագրի նախագծում շահագրգիռ կողմերի հայացքների ներառումն էր: Այս տարիների ընթացքում համայնքների հետ ձևավորված լավ հարաբերությունները օժանդակել են հետախուզման աշխատանքներին:

Երբ 2006 թվականին սկսվեցին ոսկու նախնական հետազոտման ու հետախուզման աշխատանքները, Լիդիան ընկերությունը սկսեց շահագրգիռ կողմերի (մարդկանց, ում

հետաքրքրում է Ծրագիրը կամ ովքեր կարող են կրել դրա ազդեցությունը) ոչ-պաշտոնական ներգրավումը: Ծրագրի զարգացմանը համընթաց, Լիդիան ընկերությունը պաշտոնականացրեց ներգրավման գործընթացը:

2010թ-ին Համայնքային կապերի կոմիտեներ (ՀԿԿ) ստեղծվեցին Գնդեվագ, Գորայք և Սարավան գյուղերում: 2011թ-ին ՀԿԿ ստեղծվեց նաև Ջերմուկում: ՀԿԿ-ները ներառում են ներկայացուցիչներ համայնքի տարբեր հատվածներից, օրինակ՝ կրթության, առողջապահության բնագավառից և տեղական ինքնակառավարման մարմիններից: Կոմիտեներից յուրաքանչյուրը ներառում է թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց, և նպատակ ունի ապահովել շահերի հավասար ներկայացվածություն՝ գենդերային հավասարություն ապահովելու միջոցով: ՀԿԿ-ները նպատակ ունեն արտահայտելու լայն հանրության շահերը և ապահովելու համայնքների և Լիդիան ընկերության շարունակական կապը:

Ծրագրի համար Շահագրգիռ կողմերի ներգրավման պաշտոնական պլանը (ՇԿՆՊ) ավարտվել է 2011 թ.-ին: ՇԿՆՊ-ը – փաստաթուղթ է, որն օգտագործվում է առաջնորդելու Լիդիան ընկերության շփումը շահագրգիռ կողմերի հետ Ծրագրի զարգացման, շահագործման և փակման ընթացքում, և Ծրագրի ավարտից հետո: ՇԿՆՊ-ը պետք է լինի «կենդանի» փաստաթուղթ: Այն թարմացվում է Ծրագրի զարգացմանը համընթաց՝ կախված Ծրագրի կառավարիչների և շահագրգիռ կողմերի կարիքներից: Պլանի վերջին տարբերակը թարմացվել է 2016 թ. մայիսին: Շահագրգիռ կողմերի առաջիկա շինարարության փուլում ներգրավման մանրամասները, այդ թվում, ակնկալվող խնդիրների ու դժգոհությունների հավանական գագաթնակետը, ներառված է փաստաթղթի վերջնական տարբերակում: Այս փաստաթուղթ հասանելի է ընկերության տեղեկատվական կենտրոնում և կարելի է ներբեռնել Լիդիանի կայքերից: Յուրաքանչյուր ամիս Ծրագրի վերաբերյալ նորացված տեղեկությունները համայնքային տեղեկատվական ամսագրի տեսքով տրամադրվում են Գնդեվագ, Գորայք, Սարավան և Ջերմուկ համայնքներին: Ամսագիրը պարբերաբար տրամադրվում է նաև Ծրագրի տարածքից դուրս գտնվող մեծ թվով շահագրգիռ կողմերի: 2013 թվականի ապրիլին Լիդիանը բացեց Ամուլսար տեղեկատվական կենտրոնը Գնդեվագում: Կենտրոնում տեղական համայնքների բակիչները կարող են Ծրագրի վերաբերյալ տեղեկություններ ստանալ և իրենց հարցերն ուղղել: Տեղեկատվություն է տրամադրվում նաև տեսանյութերի, պաստառների, բուկլետների և էլեկտրոնային սարքերի միջոցով: Կենտրոնը նորմալ աշխատանքային ժամերին համալրված է Ծրագրին լավատեղյակ աշխատակազմով: Կենտրոնում հասանելի է անվճար ինտերնետ կապ այն բնակիչների համար, ովքեր ցանկանում են ավելին իմանալ Ծրագրի մասին: Նախքան շինարարության մոկնարկը Ջերմուկում ևս նախատեսվում է նմանատիպ կենտրոն բացել:

Միջազգային ստանդարտներին համահունչ առաջին ԲՄԱ գնահատումը հրատարակվել է 2015թ. մայիսին, իսկ հանրային խորհրդատվության գործընթացն իրականացվել է 2015թ. հունիս և հուլիս ամիսներին: Ի լրումն ամբողջական ԲՄԱԳ փաստաթղթի, ներակայացվել է նաև հակիրճ նկարագիր և Հարցերնպատասխաններ:

Բարձրացված առանցքային հարցերը ներառել են. շրջակա միջավայրի, ջրերի, օդի, կենսաբազմազանության և մարդու առողջության վրա ազդեցությունը, ինչպես են դրանք կառավարվելու, շինարարության փուլի ժամանակացույցը, տեսողական ազդեցությունները, հողի ձեռքբերման ու սողունների վերաբերյալ բացակայող տեղեկատվությունը:

Ծախսերի օպտիմալացումն արտացոլող երկրորդ ԲՄԱԳ-ը հրապարակվել է 2016թ. մայիսին, իսկ հանրային լուսմներն իրականացվել են 2016թ. մայիսի 30-ին և հունիսի 1-ին և 2-ին Ձերմուկում և Երևանում: Բարձրացված առանցքային մտահոգությունները վրաբերել են ծրագրի նախագծին, ցիանիդի կառավարմանը, տեղացիների զբաղվածությանը, ջրերի կառավարմանն ու հողի ձեռքբերմանը: Այս հանդիպումների արձանագրությունները հասանելի են Լիդիանի ինտերնետային կայքում և ներկայացվել են ծրագրի ազդակիր համայնքների անդամներին:

Ջրի որակի վրա կենտրոնացած մասնակցային մոնիտորինգի ծրագիրն իր մշակման նախնական փուլերում է և ծրագրի զարգացմանը զուգընթաց շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի կարևոր մաս է հանդիսանալու (տես՝ ԲՄԳԾ # 5):

Համայնքի բոլոր անդամների հիմնական սպասելիքները կապված են հանքի զարգացման արդյունքում աշխատանքի կամ բիզնեսի ձեռքբերման հնարավորությունների հետ, քանի որ ծրագիրը գտնվում է խիստ սահմանափակ հնարավորություններով մի տարածքում, որտեղ շատերը աշխատանքի բացակայության պատճառով մեկնում են Ռուսաստան: Ծրագիրն այս ակնկալիքները կառավարելու է թափանցիկ կադրային քաղաքականության ու գնման գործընթացների միջոցով (տես՝ ԲՄԳԾ # 8):

Ծրագիրն ունի արդյունավետ գանգատարկման մեխանիզմ (ԳՄ), որում պահվում են բոլոր բողոքների արձանագրությունները, ինչպես նաև հասարակության կողմից հանդիպումների միջոցով տեղեկատվական կենտրոններ ներկայացված հարցերը: Տեղեկատվական կենտրոնում գտնվող անձնակազմն արձագանքում են տրված հարցերին, ներկայացնում են հետագա տեխնիկական տեղեկատվությունը և ըստ անհրաժեշտության կապվում են երևանյան գրասենյակի հետ՝ հարցերին և բողոքներին արձագանքելու նպատակով: Պաշտոնական ԳՄ պատրաստվել է դեռևս 2013թ.-ին և լայնորեն լուսաբանվել է ազդակիր համայնքների շրջանում: Բողոքը կարող է ներկայացվել անհատապես տեղեկատվական կենտրոնում կամ համայնքային կապերի պատասխանատուի միջոցով՝ հեռախոսով, էլ. Փոստով կամ նամակով: Արձագանքը պետք է ներկայացվի 14 օրվա ընթացքում: ԳՄ-ում հիմնականում ստացվել են համայնքային ներդրումների հետ կապված հարցումներ: 2015թ.-ին ֆինանսական աջակցության և համայնքային ներդրումների պահանջով 20 հայտ է ներկայացվել:

Համայնքային զարգացման ծրագիր

2007 և 2011 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, համայնքային ներդրումների շրջանակներում Լիդիանն իրականացրել է գյուղական ենթակառուցվածքների ու համայնքային զարգացման ծրագրեր: Լիդիանի կողմից

մշակվել է «2012-2014թթ համար Ամուլսարի սոցիալական զարգացման ռազմավարությունը», ներառյալ՝ համայնքային զարգացման համար ռազմավարական մոտեցումներից ու պարամետրերից բաղկացած տարեկան աշխատանքային ծրագիրը և ուրվագծելով միջամտությունների բազմաբնույթ ոլորտները: Տարբեր ուսումնասիրությունների շրջանակներում սահմանվել է, որ համայնքային զարգացման ոլորտում լավագույն գործելակերպի ձեռքբերման առանցքային միջոցը Լիդիանի համար գործընկերության հաստատումն է: 2015 թ. վերջին մշակվել է Սոցիալական ներդրումների նոր ռազմավարություն, որում ներկայացված է նախորդ սոցիալական զարգացման ռազմավարություններում նկարագրված սոցիալական ներդրումների մոտեցումը: Շինարարության և շահագործման փուլի համար Լիդիանը մշակել և հրապարակել է Համայնքային զարգացման պլան (ՀԶՊ): Մինչ օրս, ՀԶՊ-ների համար ընկերությունն առնվազն 2մլն ԱՄՆ դոլլար է ծախսել՝ հիմնականում կենտրոնանալով կրթության և եկամուտների ստացմանն ուղղված գործողությունների վրա:

Հարաբերությունները հասարակական կազմակերպությունների հետ

Ծրագիրը շարունակում է մնալ ընկերության հայտնի տեղական ՀԿների ուշադրության կիզակետում: 2014թ. ՄՖԿ համապատասխանության խորհրդատուի/ օմբուցմենի կողմից ստացվել են երկու պաշտոնական բողոքներ:

1) Տեղեկանք թիվ 3-01, Հայաստան /Լիդիան, ստացված 2014թ. ապրիլին, 9 ՀԿների օժանդակությամբ Գնդեվազի և Ջերմուկի երկու բնակիչներից: Մտահոգություն է հայտնվել տեղական ջրավազանի ջրի որակի, կարմիր ցուցակում ներառված տեսակների և տեղական տուրիզմի վրա ծրագրի ազդեցությունների վերաբերյալ: ՇՄԱԳ վերաբերյալ դիտարկումներ և ՄՖԿ կատարողական ստանդարտների ու ազգային կանոնակարգերի պահանջների անահամապատասխանության պնդումներ:

2) Տեղեկանք թիվ 3-02, Հայաստան /Լիդիան, ստացված 2014թ. հուլիսի 25-ին, Գնդեվազի 147 բնակիչներից: Բարձրացվել է կենսամիջոցների, շրջակա միջավայրի ու համանաքի առողջության վրա ազդեցության վերաբերյալ մտահոգությունը, պնդումներ ծրագրի շրջանակներում հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանների, ցիանիդով տարրավազման համակարգի միջոցով շրջակա միջավայրի հնարավոր աղտոտման, փոշով օդի աղտոտման և աշխատակիցների առողջության վերաբերյալ համարժեք տեղեկատվության բացակայության և համայնքի անբավարար ներգրավվածության մասին:

2015թ. ապրիլին, օմբուցմենն իրականացրել է առաջին բողոքի համապատասխանության գնահատում և եկել այն եզրակացության, որ ՄՖԿ ներդրման նպատակով Լիդիանում պետք է համապատասխանության ուսումնասիրություն իրականացվի: Երկրորդ բողոքն օմբուցմենի օժանդակությամբ ի սկզբանե անցել է վեճերի լուծման գործընթացով, սակայն բողոքարկող կողմի ներկայացուցիչը որոշել է, որ բողոքարկող կողմի մասնակցություն իր շահերից չի բխում: Երկու բողոքները միացվել են ներկայումս իրականացվող համապատասխանության մեկ ստուգման

շրջանակներում: ՄՖԿ ակտիվորեն հետևում է իրավիճակին և օմբուցմենին ըստ անհրաժեշտության օժանդակություն է տրամադրում:

Տեղական շրջանակներում տեղեկատվության մատչելիության

Լիդիանը սկսած XX –ից (ՄՖԿ կողմից տրամադրվող ամսաթիվ) 60 օրվա ընթացքում պատրաստելու է ծրագրի տեղամասի հարևանությամբ հասանելի ԲՍԳԱ, ԲՍԳԾ և առնչվող ԲՍԱԳ ուսումնասիրությունների և հաշվետվությունների կրկնօրինակները:

Հարցումների համար կոնտակտային տվյալներ

Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ
Հանրապետության 37, 4րդ հարկ
Երևան 0010
Հայաստան

Կոնտակտային անձ: Բոբ Քարրոու
Կայուն զարգացման գծով փոխնախագահ,
Հեռ: +374 10 56 60 37
Էլ.հասցե: Robert.Carreau@lydianinternational.co.uk

ԳԵՈԹԻՄ ՓԲԸ
Կայուն զարգացման բաժին
Հանրապետության 37, 4րդ հարկ
Երևան 0010
Հայաստան

ԳԵՈԹԻՄ ՓԲԸ
Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի գրասենյակ
Փ. Շահումյան 20 - 3701
Ջերմուկ, Վայոց Ձոր
Հայաստան

Կոնտակտային անձ: Բոբ Քարրոու
Կայուն զարգացման գծով փոխնախագահ,
Հեռ: +374 10 56 60 37
Էլ.հասցե: Robert.Carreau@lydianinternational.co.uk

Փ. Շահումյան 20 - 3701
Ջերմուկ, Վայոց Ձոր
Հեռ: +374 10 56 60 37
ԲՍԱԳ ամբողջական տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ
<http://www.lydianinternational.co.uk/reponsibility/esia>